

LIII

525

268.

9

~~1779~~

495.


Ф 11 17



Լույս
525

288

~~495~~



№ 1
uv

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԺԱՄԵՐ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հաներուկների, Բառախաղերի, Խաղերի, Խնդիրների, Բերու-
ների, Ֆոկլուսների, Կատակների, Անեկդոտների եւ այլն:

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱԴԱՄ ՍԱՐԴԱՐԵԱՆՅԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

1890

1711

70/0
4/4/4

7551

7

199

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Աչքի առաջ ունենալով մեր մանկական ընթերցանելի գրքերի սակաւութիւնը և միննոյն ժամանակ ձեր աչն սէրը, որ ունիք դէսլի զուարճալի բաժինը, խրախուսեցին ինձ՝ իմ տպած և անտիպ աշխատութիւններս իբրև մի գիրք 'ի միասին լոյս ընծայել:

Այս իմ ժողովածուն, որ պարունակում է իւր մէջ հանելուկներ, բառախաղեր, խնդիրներ, խաղեր, բերուսներ, ֆոկլորսներ, կատակներ, անեկզոտներ և շուտասելուկներ, ևս անուանեցի «Զուարճալի ժամեր»:

Սիրելի փոքրիկ ընթերցողներ, ձեր ծնողները և դաստիարակները գիշեր ցերեկ մտածում են ձեր բարորութեան, ձեզ դաստիարակելու վերայ. իսկ ևս մտածեցի որ ձեր «լալ» ժամերը զուարճալի անցնին, ուստի ամենաչն սիրով նուիրում եմ ձեզ այս իմ փոքրիկ աշխատութիւնը:

Զուարճացէք, ծիծաղեցէք, բայց միննոյն ժամանակ սովորեցէք մտածել:

Ա. Ս.

Дозволено ценз. Тифлисъ, 5-го Февраля 1890 г.
Типогр. М. Д. Ротинианца, на Гол. пр. соб. д. № 41.

527

525 - 2009

ԳՈՒԽ Ա.

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ *)

1



առարանում մի բառ գտայ,
Բաղկացած էր երեք տառից.
Բախտի բան է, թէ Աստուած տայ,
Կը հարստանամ ես շատերից:

Այդ բառը իսկ և՛ գործիք է,
Որ զուռնացի ձայն կը հանէ.
Նրա որտը, կարծիք չը կայ,
Որ շատ մարդուն շաշմիշ կանէ:

Այդ գործիքով, եթէ վատ եմ,
Շատ մարդու ես տուն կը քանդեմ.
Բացց թէ անուն բարի ցանկամ,
Երբ կամենամ կը ժառանգեմ:

*) Իւրաքանչիւր հանելուկի կա՛մ բառախաղի բացատրութիւնը պէտք է տեսնել մասն երկրորդ «Բանալի» վերնագրով գրքովում, ուր ամեն մի բաժանմունք սկզբում է № 1-ից:

Փոքրիկ շունը դռանը պառկած՝
Գունչն ու պռունկը շուռ է տուած.
Նա չի հաչում և ոչ կծում,
Ոչ օտարին է ներս թողնում:

Գիտեմ խրճիթ անպատուհան,
Չ'ունի երդիկ և ոչ դռնակ.
Ներս բազմութիւն լի անհամար
Աճում, ապրում են համարձակ:

Ունին նոքա պաշար առատ,
Ինչքան ուղես հացի ամբար.
Հողացել է Հայր Գթառատ
Չրեր քաղցրիկ և զովարար:

Յուլիս ամսին տանը նստած՝
Երբ մենք այրվում ենք խիտ շողից,
Լոյս արևից նոքա զրկուած՝
Կոնկոռնում են սաստիկ ցրտից:

Ինքս կոյր եմ, բան չեմ տեսնում,
Լեզու չ'ունիմ, ձայն չեմ հանում,
Մոլորածին կ'ուրախացնեմ,
Ճանապարհին միշտ կ'ուղեկցեմ:


Մեզնից շատ առաջ կար մի աշտարակ,
Քեզ ուղիղն ասեմ— դա էր ճիշդ քաղաք.
Պարիսպն էր ամուր, բաց բոլորն անքար,
Չ'ունէր ոչ շաւիղ և ոչ ճանապարհ:

Թէև քաղաքն այդ չէր խիտ բազմամարդ,
Չ'ունէր ոչ պալատ, զօրք և բանակներ.
Բաց և իսկապէս կատարեալ աշխարհ
Հեշտութեամբ իր մէջ կը բովանդակէր:

Նրա բրնակիչք վախենում էին
Քաղաքից մի ոտք, մի քայլ դուրս դնել,
Ամենքն անհամբեր ըսպատում էին
Համբ դեսպանին դէպ իրանց տեսնել:

Վերջապէս եկաւ դեսպանը ուրախ,
Տուեց իշխանին մի անգիր նամակ.
Իշխանը վերցրեց հանգիստ և խաղաղ,
(Թէև անուսում, անկիրթ էր իստակ):

Չեռքն առաւ թէ չէ՝ իսկոյն նա կարդաց.
«Հինգ թէ վեց օրից ազատ ենք», սասաց.
«Գոհանանք Քեզնից, Արարիչ Աստուած».
Ժողովուրդն ուրախ մեծ հանգիստ ըզգաց:



Այնքան նիհար, հիւանդոտ եմ,
Որ կը շարժեմ մարդու ես գուլթ.
Բայց զլսով հաստ, ոսկերոտ եմ,
Ծանրութիւնըս կըլնի մի փուլթ:

Պար եմ գայիս սենեակում,
Քուլէքը բռնած ձեռքում,
Որքան շատ եմ պըտըտում,
Այնքան շատ եմ զիրանում:

Ծընվում եմ ակնթարթում,
Իսկոյն և եթ մեռանում.
Երեխայի և իմ մէջ
Տարբերութիւն կայ խիստ մեծ:

Աղաղակըս չէ հրապուրիչ,
Խըլացնում է ամեն ինչ.
Ինձ չի կարող պատկերացնել
Ձեզ քաջ յայտնի նկարիչ:

Թէև ծընունդս որոտայի,
Խիստ շատ անգամ սոսկայի.
Բայց կան մարդիկ՝ աչքերը լի
Սպասում են արտասուակի:

Համելուկ կ'ասեմ, բարեկամ, որ հեշտ է սաստիկ.
Այն ո՞վ է որ ամեն լեզուով խօսում է ճարպիկ:

Եղբայրներ ենք երեսուն մէկ,
Կարծես ծնուած ենք իսկ երէկ.
Ունինք նոյնպէս եօթ հատ սիրուն,
Գողարիկ, երգիչ քոյրեր նախշուն:

Մեր հայրը վաղուց է մեռած,
Անուն անմահ մեզի թողած.
Վաղուց խօսքը քիչ չը կարծէք,
Տասնևհինգ դար կեանք ունինք մենք:

Աշխարհիս մէջ շատ ընտանիք
Վայելում են Աստծու բարիք.
Բայց ոչ մինը մեզի նրման
Մարդոց համար չէ պէտքական:

Հգոր վեցերորդ պետութեան
Հըպատակ ենք ամեն վայրկեան.
Գիտենք արհեստ բիւրատեսակ
Եւ լեզուներ մեծահռչակ:

Փոքր 'ի շատէ կարգացող մարդ
Կը ճանաչէր մինչև 'ի ցարդ.
Ի՞նչ կարիք կայ հեռու ման գալ
Եւ մեզ ստիպել ձեզ վրայ խնդալ:

Երկու հարևան դէմ առ դէմ բնակին,
Մէկը վերին յարկում, միւսը յատակին.
Չ'եղաւ որ մի օր հիւր երթան միմեանց,
Պատմեն զարդերը, վիճակը իրանց:

Բոց ու կրակ եմ տեսել,
Ձեռքըս մէջն եմ կոխել
Եւ երբէք չէ այրել.
Կարո՞ղ էք ինձ ասել
Թէ այդ կրակը մենք էլ
Շատ անգամ ենք տեսել:

Երկու զլուխ, մի ջուխտ ձեռք,
Վեց ոտ ունի—չորսը մերկ:

Թէև այս մեր աշխարհում
Հրէշները շատ են ծընվում:
Բայց ասածըս այդ կարգին
Չէ պատկանում բընաւին:

Դէ՛հ, ասացէք ի՞նչ բան է,
Շունչ ո՞ւնի թէ անբան է:

Ամառ ժամանակ հաստ և տաք քուրքում,
Իսկ ձըմեռուայ օր ձերմակ սաւանում:

Մի բուռըն ժողովուրդ ենք՝
Նիհար, վըտիտ, բարձրահասակ,
Գիշեր-ցերեկ մերկ կը շրջենք,
Չ'ունինք անգամ մի բաճկոնակ:

Միայն մեր զարդն է գունաւոր՝
Կարմիր, սպիտակ, դեղին զլխարկ.
Ամեն տեղ մուտք ունինք մենք
Ազատ, արձակ և համարձակ:

Առ երեսըս շատ հանդարտ ենք,
Բայց և այնպէս խիստ հպարտ ենք.
Եթէ մէկին փնաս հասցնենք.—
Այդ բանումն էլ մենք անպարտ ենք:

Բընութիւնն է մեր երերուն,
Կատաղի ենք շատ, վառվռուն.
Փորձեցէ՛ք մեզ զայրացնել՝
Եւ կը մնաք աղքատ, անտուն:

Թէև մարդ չի,
Ոչ շունչ ունի.
Բայց անդադար,
Մի ամբողջ դար
Աղմուկ կ'հանէ
Ու կը շրջէ:

Յեա ստեղծմանէ մեր երկրի
Մինչև այսօր, մանուկներ,
Թշուառ, անտէր ու գերի
Մընացել եմ անհամբեր:

Տէրութիւնս է ընդարձակ,
Ժողովուրդքս անհամար,
Աշխարհիս կէս բովանդակ
Կառավարում հայրաբար:

Բայց ի՞նչ կ'անեմ այդ փառքը.
Բի՛ւր են ցաւիս պատճառքը.
Լոյս արևից զրկուած եմ:
Ո՛վ եմ, փոքրիկ պարոններ,
Որ այդպէս խիստ պատժուած եմ:

Ալ եմ նրման ճիշդ նեղրի,
Իսկ աչերըս են վագրի.
Ընկած գետնին խրճի պէս,
Երբեմնն փայլում ոսկու պէս:

Ես ծընողիս չեմ սիրում,
Մահ է ինձ միշտ խոստանում:
Բաւական է մօտենալ,
Մի ժամուայ մէջ հող դառնամ:

Ոտքեր չ'ունիմ—կը ցատկեմ,
Ձեզնից էլ շատ կը վազեմ,
Միայն թէ ինձ ծեծեցէք,
Ապտակներով զարկեցէք.
Բան չեմ շինում, ես ծոյլ եմ,
Առանց ծեծի մեռած եմ:

Ես քեզ կ'ասեմ մի հանելուկ,
Տե՛ս, չը պոռաս, ո՛չ մի շշուկ,
Պատասխանի՛ր դու ինձ ծածուկ,
Աշխատի՛ր որ լինի կտրուկ,
Գուցէ ստանաս դու մի գրքոյկ:

Այն ի՞նչ բան է, որ ամեն մարդ՝
Ծերունի թէ երիտասարդ,
Կո՛ւզես վեր ա՛ն թունաւոր սարդ
Կամ հոտաւէտ մի կարմիր վարդ,
Ունի իր մօտ իբրև մի զարդ:

Այդ զարդը ո՛չ է իսկական
Շնչաւորաց լոկ սեպհական.
Այլ ամենայն մի առարկան՝
Վերացական թէ թուական,
Ունի ՚ի բընէ ստացական:

Այստեղից դուրս վազեցի
Դաշտի ծայրումը պառկեցի:

Ասացէք դուք ինձ կենդանու անուն,
 Որ նոյնպէս լինի յայտնի դերանուն,
 Միայն կաթնակեր և արիւնարբու,
 Բայց ո՛չ սատանայ, արագիլ կամ բու:

Ամեն մէկըս մեզանից
 Տան մէջ ունինք դերասան.
 Ինքը համր է, հետն էլ խուլ,
 Միայն տեսնէ ամեն բան:

Համարձակ է, շատ ճարպիկ,
 Նա չի քաշվում ոչ ոքից.
 Ինչպէս ծաղրածու կապիկ
 Ընդունակ է ամենքից:

Շարժումաճքներն է բընական,
 Միմիկը զարմանալի,
 Կը կատարէ ամեն դեր
 Վարպետութեամբ հրաշալի:

Մի ձև ցոյց տաս — հերիք է,
 Իսկոյն կ'աւնէ օրինակ.
 Բայց կենաց մէջ չը տեսաւ
 Գէթ մի ընծայ, ծափ, պըսակ:



Այար ժամանակ որ համարձակ
 Հրդեհի դէմ էի կըռվում.
 Իսկ այսօր շատ հասարակ
 Ձերմութիւնիցն եմ դողդողում:

Գիշեր, ցերեկ, անձրև, արև,
 Թափառական ման կուզամ,
 Ողջ երեսըս այրվում, խորվում,
 Թաց է լինում շատ անգամ:

Այն ինչ լուսին, պարզ եղանակ,
 Տանը նստած գլխակոր,
 Տխուր, արտում, բացողուշի պէս
 Մի անկեան մէջ կը մնամ:

Առ երեսըս շատ կը պատուեն,
 Գլխի վրայ ման կ'ածեն.
 Վըտանդի ժամ թեքերս ծալեն,
 Շան բերանում կը կոխեն:

Այս բոլորը տառապելով
 Տանում եմ ես լուռ ու մունջ,
 Միանգամայն նորա համար,
 Որ ծոյլ, անբան ինձ չ'ասեն:

Երկու ջոկ ջոկ հրամայական
Բարդեցէ՛ք իրարու հետ
Եւ կը ստանաք մի ածական
Գործածական շատ բառի հետ:

Թէև չեմ ծաղիկ,
Բայց ծաղկից շինած.
Ոչ էլ տերևիկ,
Տերևից հիւսած:

Պատճառն ի՞նչ է որ փողը
Շատ բարձր ձայն է հանում,
Վախտ-վախտ բերում մեր դողը,
Երբեմնն էլ հիացնում:

Մի լիճ դիտեմ որ մեծութեամբ
Հաւասար է ովկեանոսին,
Գոյնի կողմից շատ նրման է
Թէ՛ սև, դեղին, կարմիր ծովին:

Մեծ բազմութիւն այդ լճի մէջ
Կարմրել են, սև գոյն ստացել,
Շատ լողորդներ նոյն ջրի մէջ
ձերմակ, պայծառ դէ՛մբ են բռնել:

Թագաւոր կը ճանչնամ
Որ քաջ էր ամեն ժամ,
Հասակն էր խիստ երկար
Եւ քաշն էր ճիշդ մի գրան:

Ես մի համեղ պըտուղ եմ,
Որ սկզբնական հազուստով
Կենդանուն եմ նմանվում.
Ի՞նչ եմ, ասացէ՛ք շուտով:

Բարձրամտակ սարի գլխին
Բողորածև լիճ եմ տեսել,
Լըճի ուղիղ մտա կենտրոնին
Մի նեղ կղզի է բարձրացել:

Կղզին ունի ներսը հրաբուխ,
Որի բերնից ամենայն օր
Դուրս է գալիս գոլորշի մուխ,
Ինչպէս առաջ Սողոմ Գոմոր:

Դըրա ջուրն է և՛ օդասկար
Ե՛ւ մատչելի մեղ ամենիս,
Որ խըմում ենք սրտով յօժար
Ամառ-ձմեռ, ամբողջ ափիս:



Handwritten notes in blue ink: 5002-225, 7010, 414/4

Երկու փեշաքար, մէկը ծեր Դաւիթ միւսը Յովնաթան,
 Իրար դըրացի, մի թաղում ապրում իբրև բարեկամ:
 Քուրքչի Դաւիթը մէջքը կորացած՝ մեծ էր հասակով
 Քան Յովնաթանը, որ նոյնպէս ճոն էր նա էլ արհեստով:
 Տարին մի անգամ ծերունին Դաւիթ մեր Յովնաթանին
 Տեսութիւն կ'երթար, չէր հարցնի ցրտին և ոչ էլ բըքին:
 Յովնաթանի տուն հեռու չէր, ասինք, և այնքան էր մօտ,
 Որ մեր ծերունին և ոչ մի փայտի բընաւ չէր կարօտ:
 Դողդողալով (ճիշդ մի ըսպէտմը) կ'երթար նորա տուն,
 Կ'օրհնէր, խրատէր, և բարիք ցանկար մեր Յովնաթանուն:
 Իսկ Յովնաթանը՝ այդ ապերախտը չ'եղաւ որ մի օր
 Այցելէր ծերին, տար պատիւ նորան, յարգ արժանաւոր:
 Այնքան դանդաղ էր այդ մեր ջահէլը, որ եթէ ցանկար,
 Համարեն տարի կ'անցնէր մինչև որ ծերի մօտ նա զար:

Ներսիցն է հաղար ու տաս.
 Դրսից կատարեալ ատլաս:

Այն յանցաւոր արարածներ
 Որ օրէնքից չեն վախում,
 Իրանց ձեռքով այդ լրբերը
 Իրանց պատիժը տպադրում:

Աշխարհիս ամեն ծայրում,
 Պատերազմի դաշտերում,
 Մի քանի դար մեզնից առաջ
 Դահիճ էի համարվում:

Բայց հանդամանքն երբ փոխուեց
 Եւ քիմիան ինձ յաղթեց,
 Սպանիչ պաշտօնըս առաւել
 Դէպի լաւը փոխարկուեց:

Առաջ զինուոր և անասուն,
 Կանայք, մարդիկ խոցոտում:
 Իսկ ներկայում եղբօրըս հետ
 Ժամանակ եմ որոշում:

Այո՛, առաջ ես ատելի,
 Շատերի սիրուն եմ ծակել.
 Բայց ներկայումըս նոյն սրտում
 Ինձ օթւան եմ գտել:


Ծով չէ, որ ասեմ թէ ծով,
 Ոչ հող, որ ասեմ թէ հող:
 Ձեն լողում նաւով,
 Ոչ վաղում ձիով.
 Հաղիւ թէ շրջեն
 Մարդիկ դողէդող:

Ամառն ընկած սառցատան մէջ
 Անհաց, անգործ մեռնում եմ.
 Զմեռուայ օր բոց կրակի մէջ՝
 Թէև խիստ կուշտ այրվում եմ:

Բախտիս բերմամբ ծնայ թէ չէ՝
 Այլանդակ հրէշ կարծեցին.
 Որովհետև զլուխըս հաստ էր,
 Ինձ խաղալիք շինեցին:
 Եւ չիրաւի անձեռք, անաչք,
 Երկար մազեր ունէի.
 Ուստի և ինձ երկարամազ,
 Ծվծվան դղում կանչեցին:
 Անիծելով իմ չար բախտըս,
 Կըպել էի չոր պատին.
 Զայնըս կտրած, ահ ու զողով,
 Սպասում էի վարպետին:
 Ահա կը գաց, հացը կ'ուտէ,
 Հէ'նց որ զինին կը կոնծէ՝
 Ականջներըս պինդ կ'ոլորէ,
 Մազերըս կը ձգձգէ:
 Ես էլ ցաւին չը զիմնալով՝
 Ողբ կը կարդամ ամեն ժամ.
 Է՛հ, ի՛նչ արած, նա կարծում է
 Շատ եմ սիրում ծեծի համ:

Շուրջըս մարդիկ խումբ-խումբ շարուած,
 Կը ծիծաղեն, ծափ կը տան.
 Զը կաց մէկը խիղճ ունեցող,
 Որ ինձ օգնէ մի անգամ:

Սար եմ հարիւր տարեկան,
 Եւ փոխարքայ պարսկական:



ԳՆՈՒՆ Բ.

ԲԱՌԱԽԱՂԵՐ

1



նձին բառը կէս արի,
Տարի ու մի է՞ծ ստացայ.
է՞ծն ու տարին շուռ տուի,
Միջատ ու փարայ ստացայ:

2

Աւքիս առջև պատրաստի կան
Տեսակ տեսակ երեք հատ բառ.
Մէկն է, եղբայր իմ պատուական,
Բաւականին մի բարձր սար:

Միւսն է յայտնի մի դերանուն
Բայերի հետ դորձածական.
Իսկ երրորդը այդու անուն,
Ձեզ ամենքիդ էլ սիրական:

Այժմ պէտք է այդ բառերից
Շինէք ինձ համար հանելուկ.
Փորձեցէ՛ք դուք ամեն կողմից
Եւ կը ստանաք անուն յատուկ:

Տասնը իննը դար մեզնից առաջ
Այդ մարդը մեծ վեհապետ էր,
Աղօթասէր, արի և քաջ,
Ողորմած ու մարդասէր էր:

Այդ թագաւորն էր, իմ հոգեակ,
Լապտերն առջև ճամփայ ընկաւ,
Նոր արքային, իմ աղաւնեակ,
Երկրպագեց, ընծայ տուաւ:

3

Որոնեցէ՛ք յատուկ անուն,
Կազմած լինի երկու վանկից.
Երկունս և եթ թո՛ղ բայ անուն
Հրամայական եղանակից:

4

Մի բառ գիտեմ երկվանկանի,
Շատ դժուար չէ, ով պատանի,
Խնդրի լուծումն ով որ հանի,
Նա պարգևի է արժանի:

Ամբողջութիւնն չէ՛ կենդանի,
Ո՛չ ձի, ո՛չ էլ չորքոտանի.
Այլ մի պտուղ է պիտանի,
Բաց չը կարծէք թէ ծիրանի:

Բառի սկիզբը դերանուն է,
Կո՛ւղես ասեմ, —ցուցական է.
Իսկ երկրորդը մի թռչուն է,
Որի համը դեռ բերնումն է:

Այդ քանը զեռ չէ բաւական.
Եթէ այդ բառը, հնգական
Տառից կազմած, անենք բաժան,
Երկու խօսքեր գործածական
Կը ստանանք մենք ճիշդ հայկական:

Երեք տառը մի գործիք է,
Դարբիններին մեծ կարիք է.
Իսկ մնացեալը զերանուն է,
Բայց չեմ ասի—այդ զաղանիք է:

5

Ոտքը շէմքից չը հանէք,
Հանդարտ նստէք ձեր տանը.
Ի՞նչ է գանձում, ասացէ՛ք,
Ուղիդ Վանայ մէջ տեղը:

6

Մեծ քաղաք եմ Եւրոպայում,
Փռուած սիրուն լճի վերայ,
Վեր ան միրատ՝ սուր և փայլուն,
Կտրի՛ր գլխիցըս երկու տառ
Եւ կը տեսնես որ չը մեռայ.
Այլ ես դարձայ զեռ անուանի,
Յայտնի ամբողջ Ռուսաստանի:
Իսկ ո՞վ գիտէ,
Չգրու բան է,
Բարկանաս և ինձ փորձես
Ու իմ մարմնից մի տառ պոկես,

Որ ինչ է ինձ ողջ-ողջ սպանես.
—Շատ ի զուր է,
Քո խելքն ո՞ւր է:
Չէ՞ որ ես էլ այն ժամանակ,
Քո ցանկութեանը հակառակ,
Բոլորովին կ'կենդանանամ՝
Ու ամենքիդ մայր կը դառնամ:

7

Մի բառ գիտեմ տաս տառանի,
Այդ հերիք չէ, չորս վանկանի.
Ամեն վանկը իր միտքն ունի,
Մէկը միւսի հետ կապ չ'ունի:

Առաջին վանկն աշխատութիւն,
Իսկ երկրորդն է ճիշդ դերանուն,
Երրորդ լինի թո՛ղ բայ անուն,
Վըրայ չորսը ազգի անուն:

Ինքն ըստ ինքեան դա բարդ բառ է,
Աշխարհիկ և դրաբար է,
Երևոյթ է խիստ գունաւոր,
Տեսարան է շատ փառաւոր:

8

Չեղ ամենքիդ սիրական
Թռչուն եմ անզուգական.
Գլուխըս երբ որ կտրեցին,
«Ոխա՛կ» ամենքն ասացին:

Ինձ մի ալեղարդ ծերունի
 Զատկի տօնին զիրք ընծայեց,
 Սիրուն կազմած երկանուանի,
 Որի տեպը ինձ հիացրեց:

Վերնագիրն էր տարօրինակ,
 Ընդ ամենը երկվանկանի.
 Ամեն վանկը մի մի քաղաք
 Ուշադրութեան խիստ արժանի:

Երկունս և եթ իշխանական
 Քաղաքներ են Հայաստանի,
 Իսկ ներկայումս տաճկական,
 Սեպհականութիւն սուլթանի:

Քանի՛ քանի՛ թշուառութիւն,
 Քանի՛ ահեղ պատերազմներ
 Տեսել են, սուլ, սրածութիւն
 Եւ դեռ ապրում են կիսամեռ:

Դէ՛հ, ասացէ՛ք, մի՛ յապաղէք,
 Անունն ի՛նչ է այդ ընծայի.
 Աճօթ է մեծ, մի՛ դանդաղէք,
 Կարօտ եմ ձեր պատասխանի:



Տեսէ՛ք, ձեզ մի բան ասեմ,
 Եթէ այդ բանի վերայ
 Այս տաւերը
 Աւերացնեմ,
 Կողքին կայցնեմ,
 Զեզ կարդացնեմ. —

Դուք այն ժամանակ ինձ կ'ասէք,
 Բարձրաձայն կը պատասխանէք.
 «Այո՛, դա բայ է,
 «Սահմանական է,
 «Եւ երրորդ դէմք է»:
 — Հիանալի է:

Եթէ յե՛ն տաւը հեռացնեմ
 Եւ յանկարծ լի՛ն-ի վերածեմ.
 «Կրկին մի բայ է,
 «Ես համաձայն եմ,
 «Շարունակեցէք»,
 Ամենքդ էլ կ'ասէք:

Թողնեմ իւր տեղ ես այդ լի՛ն-ը,
 Կայցնեմ կողքին « է » հնչիւնը.

«Դա գոյական է,
 «Այո՛, անշունչ է,
 «Եւ լաւ գործիք է»,
 Անշուշտ ինձ կ'ասէք:

—Շատ զեղեցիկ
Եւ շատ բարի.
Այժմ տեսներք, ո՞վ կը հասկանայ,
Խնդրի լուծումը ո՞վ կը բանայ:
Ո՞ւր է բանալին,
Ո՞րն է բանալին.
Պատասխանեցէ՛ք,
Դէ՛հ, շո՛ւտ ասացէք:

11

Երկու դերանուն, և մի հատ շաղկապ
Կազմեցէ՛ք այնպէս՝ որ դուրս գայ մի բառ.
Աշխատանքները չ'անցնի զուր պարսպ,
Վատ բան է լինել միշտ ժամապահառ:
Ամբողջութիւնը, տե՛ս, լինի հրեշտակ,
Որին վռնտեց Ինքը Տէրն Աստուած.
Եթէ պատմութեան դու քաջ ես տեղեակ,
Իմացած եղի՛ր խնդիրն է պարզուած:

12

Տասն և երեք տառից կազմած
Մի բառ դիտեմ աշխարհաբար,
Միմեանց ետքից կարգով շարուած
Կան իննը հատ բաղաձայն տառ:
Դու չը կարծես թէ մնացեալ
Չորս տառերը ձայնաւոր են.
Չէ՛, սիրելիս, հէ՛նց երկուսը
Այդ տառերից բաղաձայն են:

Այստեղ միայն երկու տառ կայ
Որ խկապէս ձայնաւոր է.
Միայն ը զիրը բացակայ
Ամեն վանկում հարկաւոր է:

Այդ բաղաձայնով լիք բառը
Սահմանական է եղանակ.
Մի՛ վախենար, բաղխե՛ դուռը,
Ճիշդ ապաւնի է ժամանակ:

Ել մի՛ նայիր պատասխանին—
Թիւ եզակի երրորդ դէմք է.
Նըման եղիր անհամբերին
Եւ շուտ զտի՛ր— այդ քո սլարտքն է:

13

Ազիզ կըտոր
Ամեն բանի,
Տառ մի թոցրո՛ւ՛
Քաղաք կ'անի,
Մէկն էլ վե՛ր առ՝
Մակբայ կըլնի:

14

Հրամայական երկու բառ
Իրարու հետը բարդեցէ՛ք,
Որ ըստանանք միայն մի բառ.
Բաց անորոշ բայ նայեցէ՛ք:

Չախից կարգաբ կենդանի,
Աջից բոցաի ցողուն եմ:
Կաթնասուն չորքոտանի,
Զը կարծէք թէ սողուն եմ:

Կենդանութեան ժամանակ
Անարգուած էի ամենից,
«Կեղտոտ, մուրտաւ» ածական
Լըսում էի բոլորից:

Եկան վերջին օրերըս,
Սուրբ բողազիս հասաւ.
Մարմինըս արին բաժան,
Ել «կեղտոտ» ոչ ոք չ'ասաւ:

Հերիք չէ որ ինձ կերան,
Իմ միան էլ ինձ ուտեցրին.
Ինկվիզիցիանս յիշեցէք,
Աղիքներըս լըցուցին:

Կողոպուտըս շինեցին
Իրանց կեղտին լաւ մաքրիչ,
Եւ դեռ չեն էլ ամաչում.
Այս ի՞նչ կարգ էր, Արարիչ:

Ահաւասիկ լսեցի՞ք
Թէ ի՞նչ ասաց կենդանին.
Ուշադրութի՛ւն, պարոններ,
Պատասխանը չէ լսթին:

* Մի բայ գիտեմ հրամայական,
Վերցնենք դորան երկու անգամ
Եւ կը ստանանք մի գոջական,
Որ մեր խանութի պահապան
Ներսէս եղբօրն է խիստ արժան:

‡ Այդ պահապանը Ներսէս
Մի շուն ունի ջարալէզ,
Որի անունը նոյնպէս
Ըսկալում է տիրոջ պէս:

‡ Շան անունն էլ երկու վանկից
Կազմած է զատ-զատ բառերից.
Թէ երկրորդից չէ՞-ը վերցնենք
Առաջինի տողին կպցնենք,
Մի ընտիր բոյս մենք կը ստանանք,
Ուտենք, խմենք, հարստանանք:

† Մնացորդն է մի կենդանի,
Մեր օջախին շատ պիտանի:

‡ Բաւական, ինչ ձգձգեցինք,
Հերի՛ք, ինչ որ գզգզեցինք.
Կարգանք այդ բառը ձախ կողմից
Եւ ըստանանք միջատ նորից:



Կիւրակէ որ առաւօտեան եարմնկում
Մի մարդ տեսայ ճերմակ ու կարճ մօրուքով,
Այգու դիմաց՝ հընախաճառի բաժնում,
Կըռան տակին փտած, մաշած գրքերով:

Խիստ շատ սրտով ուղեցի որ խմանամ
Թէ ո՛վ է այդ հետաքրքիր պարոնը.
Բաց մինչդեռ ես նորա հեռ ծանօթանամ,
Լաւ կ'անեմ տեղեկանամ պաշտօնը:

Ես ուղղակի հարեանիս դիմեցի.
«Ազնիւ պարոն, ասն խնդրեմ ինձի դու,
«Այս ճերուռինն ո՛վ է կամ ո՞ր երկրացի,
«Պաշտօնն ի՞նչ է, ազգն ի՞նչ է այս մարդու»:

Իսկ նա հարցիս պատասխանի փոխանակ,
Քիչ մտածեց, ծիծաղելով այս ասաց.
«Դա է յայտնի, աշխատասէր մի մշակ,
«Քըլունդամոլ, հընութեանը անձնուրաց»:

— Իմ բարեկամ, ես քեզ այդ չեմ հարցանում.
— Շատ լաւ, պարոն, տէրտէրն ահա անցկացաւ:
— Այդ ինչ խօսք է, բընաւ քեզ չեմ հասկանում.
— Դորա ազգն է, ասաց, իսկոյն հեռացաւ:

Անմիջապէս գրժի տեղն ընդունեցի,
Ասի, անշուշտ այդ պարոնը չ'իմացաւ.
Զ'հաւատալով ուրիշ մարդուն դիմեցի,
Որը նոյնպէս միւլնոյնը ինձ ասաւ:

Խիստ չարացած եկայ իմ տուն նստեցի,
Մի ամբողջ ժամ մտածեցի զլուխըս կախ.
Փառք Աստուծոյ, վերջ 'ի վերջոյ լուծեցի
Եւ իմացայ որ այդ խօսքն էր բառախաղ:

18

Ես եմ կենդանի
Ամառն ահարկու,
Տ տառն աւելցրի,
Այժմ եղանք երկու:

19

Երկու բառ ենք վեց տառով,
Ըսկալում բաղաձայնով.
Իրարու շատ նմանվում,
Նոյն տառով էլ վերջանում:

Մէկի մէջ միայն « է,
Բաց չը կարծէք թէ բայ է.
Միւսի մէջ ձայնաւոր «
Զը մանգաք վեր 'ի վերոյ:

Երկուան և եթ զոչական
Անուններ են նիւթական,
Մէկը խիստ պինդ քարի պէս,
Միւսը փափուկ եղի պէս:

Ծովին թէև ոխերիմ՝
Բաց յատակում տեղ ունիմ.
Առանց ինձի ոչ մի նաւ
Զի շարժուիլ տեղից բընաւ:

Աջ ու ձախ ի՞նչ էք շրջում,
Նստած եմ գաթի միջում:
Բարեկենդանը եկաւ,
Իմ դովրանը բացուեցաւ:

20

Քահէ՛ք ինձ մի թիւ,
Քէն-ն աւերանայ,
Կորցնէ իր հաշիւ,
Իսկոյն բթանայ:

Քէն-ի թո՛ղ Գի՛ճ
Յառաջ մօտենայ,
Որպէս մտերիմ
Խղձաց ու գթաց:

Լո-ն շատ է համեստ,
Վեր ան քանի հատ,
Դի՛ր բերանըդ տե՛ս,
Կարծես է շարբաթ:

Խէ-ն չէ հարազատ
Լո-ին բարեկամ,
Խոչնդոտ ու վատ
Է միշտ, յարածամ:

Ճէ-ն Լո-ի ազգին
Է միշտ պատկանում,
Զարդարում աչգի,
Գինի պատրաստում:

Ճէն-ն է խաւարի
Հարազատ զաւակ,
Անկիրթ ազգերի
Բան ու գործ, փէշակ:

Մի հատ փե-ր մնաց
Որ ծանր ու բարակ
Իր տեղն է ընկած.
Մեծ է դրա վաստակ:

21

Բարդեցէ՛ք մէկ մէկու հետ
Կրկին երկու հրամայական,
Ստանանք մի բառ իսկոյն և եթ,
Այս անգամն էլ հրամայական:

Իմ ուղածը պէտք է լինի
Երեք բաղաձայն, երեք * .
Թող պատասխան ուրիշ լինի,
Առաջարկող զո՛հ կը մնայ:

Այսպէս չորս հատ հրամայական
Վերցրէ՛ք զոյգ-զոյգ վերջնական.
Մէկը վերին հարցին զո՛հացում,
Միւսով վերջինին հատուցում:

22

Այն ի՞նչ բան է, թէ ասեմ վեր ան կե՛ր՝
Անմիջապէս կը դառնաս իմ ընկեր:

Քառսուն տարի ազգիս համար
Գլուխս ու հոգիս զոհեցի,
Քանի՛ պարսիկ և քանի՛ մար
Մահմէդի մօտ զրկեցի:

Արած զործերիս փոխարէն
Իմ ազգն ինձ լաւ վարձատրեց.
(Շնորհակալ եմ իմ՝ Արարչէն),
«Քաջ» մականունն պարգևեց:

Բայց արի՛ տես մի զըրազիր
Յիմարաբար սըխալուեց.
Այն է՝ քիւն տառը նօտրազիր
Այ՛ն ձայնաւորի փոխեց:

Այդ սըխալիցը զուրս եկաւ
Որ անունըս փառաւոր
Ոտքից ցզլուխ փոփոխուեցաւ,
Դարձաւ կարիճ թունաւոր:

Խնդրում եմ ձեզ խոնարհաբար,
Ինձ մի՛ թողնէք խայտառակ.
Գտէ՛ք շուտով իմ ուղած բառ,
Գիճ քաշեցէ՛ք նորա տակ:

Քարն ու մոմը զարձըրի,
Ուրաքը տոկոս սրացայ:

ԲԱՌԵՐԻ ԳՈՎԵՍՏԸ

« Ես խաղերի մեծ իշխանն եմ.
Ք Իսկ ես երգերի աղն ու համ.
Գ Ոչ այս, ոչ այն՝ ես մի բայ եմ.
Դ Աշակերտի դասն ամեն ժամ:

Բ Հեղանիւթի լաւ պահեստ եմ.
չ Սըգաւորի առատ պաշար.
Խ Թէեւ զիւղ եմ, բայց հազուստ եմ.
Հ Իսկ ես բայ եմ սովորաբար:

Կ Առաջին պայման պըսակի.
Ծ Ձարդարանք եմ կոտորակի.
« Բանջարեղէնի սիրահար.
« Իսկ ես յայտնի թիւ ու համար:

Ֆ Ես ոչ թիւ եմ և ոչ համար,
Ոչ էլ բայ եմ սովորաբար.
Այլ մի խեղճ մարդ տարակուսած,
Ամեն մարդու աչքից ընկած:

Գալիլիայում մի քաղաք եմ ճանաչում,
Ուր մեր Տէրը իր հրաշքներն էր կատարում,
Եթէ այդ բառը հակառակն եմ վերցնում՝
Մեր հայրապետի հօր անունն եմ ստանում:



Մի հարուստ մարդ վաճառական
Մեծ գումարով բառեր ծախեց.
Գուրս եկաւ մի նոր խանութպան
Ունեցածով բոլոր գնեց:

Շատ չիմար մարդ «Թշուառական,
Կեղծաւոր մարդասէր» կանչեց.
Այն ինչ յայտնի մի լեզուաբան
«Ամահ բարերար» անուանեց:

Յատուկ անուն է մեծ տիկնոջ,
Մայր ամենայն զգաստութեանց.
Իշխանուհի Բագրեւանդայ,
Դիցուհի մեր Հայկազանց:

Նոյն անունը ընդհակառակ
Դիցուհի է լատինաց,
Ծընունդ մեծին Արամազդայ,
Զերթ Աթէնասն յունաց:

Բառարանում աչքից ընկած
Երկտառանի զերանուն եմ.
Հակառակը՝ խաղերի մէջ
Շատ մարդու տունը քանդող եմ:



Ես սև ծովիցն էլ հեռու
Կախարդական քար ստացայ,
Բարեկամքս ինձ խնդրեց
Կէսըն իրան տամ ընծայ:

Խընդիրքը չը մերժեցի,
Քարը վերցրի կէս արի.
Ահա զարմանք, Տէր Աստուած,
Երկու քուրդ ելան կատղած:

Ես հոտաւէտ ծաղիկ եմ,
Հետն էլ յատուկ անուն.
Եթէ վերցնէք կէս անէք՝
Կը դառնամ երկու անուն:

Դարբընի մօտ երկուսիս
Երբ կամենաք կը տեսնէք.
Մտէք յետին զործարան՝
Այնտեղ էլ մեզ կը գտնէք:

Այժմ վերցրէք աջ կողմից,
Կը դառնամ ես բայ անուն,
Մի անհաճոյ վատ պաշտօն,
Որ դահիճն է կատարում:



« Մանկութիւնից մի շողկապ եմ ճանաչում,
 Երբ դու սառը զալիս է դրան տեսութիւն՝
 Իսկոյն և եթ գոյնն է նետում, փոփոխվում,
 Էլ չես տեսնի շողկապի մէջ նմանութիւն.
 Անմիջապէս Աերմննտօյն է յիշեցնում
 Նորա դէմքի պատկերի գծագրութիւն:

Ք Դուն վերկացաւ հանդարտ-հանդարտ դուրս գնաց,
 Նորա տեղը Ք-ն մօտ եկաւ խիստ կամաց.
 Անմիջապէս Տարօնի արծիւը սեաւ,
 Աչքիս առջև բաց օդումը սըլացաւ:

Գ Ահա, տեսնեմ ի՞նչ-ն մօտեցաւ կամացուկ,
 Աչքերը պղտոր, թուրք բերնին՝ խիստ ծածուկ.
 Շատ վախեցրեց անհղ տեսքովն անպիտան.
 Կարծեցի թէ գըտընվում եմ գժատան:

Դ Փառք Աստուծոյ, ի՞նչ-ն էլ գնաց զլիսակոր,
 Մէ-ն մօտեցաւ աչքերը չուած խիստ խոժոռ,
 Մագերը զանգուր, երես տխուր ու տրտում.
 Կարծես թէ ճիշդ արաբի էր նրմանվում:

Է Տեսէ՛ք, տեսէ՛ք, չու-ն զալիս է ձեռնոցով,
 Ֆրրակ հազին՝ աչքերը ծածկած ակնոցով,
 Անիրաւը շատ է վախում, քրքրվում,
 Փայտը ձեռքին հպարտ-հպարտ խաղացնում:



Կաւ են ասում իմ մօրըս,
 Բըրուտ էր անուն հօրըս.
 Զէթն ու զինին ամեն օր
 Համարեա լիքն էր իմ փոր:

Ուզեցի որ մեծանամ,
 Բարձրահասակ տեսք ստանամ,
 Պոչիս կըտոր աւելցրի,
 Մաւալըս պակասցըրի:

Բայց ես դարձայ թափանցիկ,
 (Թէև հասակով կարճլիկ).
 Այս անգամին պատուաւոր,
 Գողտրիկ, սիրուն, փառաւոր:

Գլուխըս կտրեցին մարմնից
 Ամբողջապէս գրեթէ,
 Երբ կարգացին աջ կողմից՝
 Դարձայ անօթ երկաթէ:

Այդ ի՞նչ կաւէ աման էր
 Որ վերջն եղաւ ապակի.
 Կամ ի՞նչ տեսակ կտտակ էր
 Որ փոխուեցաւ երկաթի:



Ես անիմաստ մի վանկ եմ,
 Աջ կողմից ինձ կրկնեցէ՛ք՝
 Իսկոյն յատուկ անուն եմ,
 Երբ սուչիս հետ կը ձուլէք:

Որ ինչ է քիչ հեշտացնեմ՝
 Պատմեմ ձեզի արարքըս,
 Աւելի շուտ հասկացնեմ՝
 Պարզաբանեմ ասածըս:

Աւազակ էի առաջ,
 Մարդիկ էի հալածում,
 Կարծում էի ինձ արի, քաջ՝
 Կանայք, մանկունք խոցոտում:

Բայց երբ տեսայ Արարիչ,
 Դարձայ նորան հետևող,
 Հեթանոսին քարոզիչ,
 Տրկարներին միշտ օգնող:

Հինգ տառանի մի բառ գիտեք —
 Մարգարէի անուն է.
 Սկզբից երկու տառ որ վերցնենք —
 Կ'ասենք դա դերանուն է.
 Եթէ մի հիւս աւելացնենք —
 Այդ վասակի պաշտօն է:

Վերցնենք երկու տառ աջ կողմից —
 Ասենք դա է զոցական,
 Նոյն հիւս տառը կպցնենք կողքից —
 Թիւն է յայտնի ուղղական,
 Մի տառ փոխենք բառի սկզբից —
 Լինի հայեաթ վանքական:

Երեք վանկերից մի բառ
 Կարդացի ես զբաբար.
 Վերցրի նորան լուծեցի,
 Մի քանի բառ կազմեցի:

Գտայ այդտեղ ես մի օս,
 Բազմաչարչար մարտիրոս,
 Մի հատ սուրբ մարդու անուն
 Մի հատ էլ քրդի անուն:

Գտայ նոյնպէս մի ամիս
 Եւ կռուարար պարոնիս,
 Գտայ նահատակին էլ.
 Արոն էլ նոր էր կանաչել:

Եթէ դու լաւ որոնես՝
 Մի առարկայ էլ դոնես,
 Որի անունը չը գիտես
 Ո՛չ դու, եղբայր, և ոչ ես:



Աւքիս առջև խիստ տխրամած՝
Մի բաղաձայն տառ կար նստած.

«Արի՛, ասի, քիչ շատացնեմ,
«Գուցէ տեսքը գեղեցկացնեմ»:

Վերցրի մի տառ կողքին կպցրի,
Ամենայն կերպ ես սագացրի.

Բայց վերջը երբ գոցնը տեսայ,
Ուղիղն ասեմ՝ շատ զարմացայ:

«Ասի, եղբայր, այս ի՛նչ հրաշք էր,
«Արթո՞ւն եմ՝ թէ սա երազ էր»:

Ճիշդ կէս արշին բերանըս բաց,
Որպէս մի զիժ ապշած, մընաց:

Ես այդ բառը չ՛հաւանեցի,
Նորից մի տառ աւելացրի.

Այս անդամին սարիցը դուզ
Գլորուեցի ես կըլտիպուզ.

Զարթոտեցի քինթս ու պռունդըս,
Պատուեցի մէջ տեղից գլուխըս:

Այս խաղը ինձ չը դուր եկաւ,
Մագմանդի բանը դուրս եկաւ:

Եղայ իստակէս խայտառակ,
Ինձ ծանօթիս ծաղր ու ծանակ:

«Թողնե՞մ կիսատ—դա լաւ բան չէ.
«Իմ տեղն ուրիշը կ'ամաչէ»:

«Անօթ է ինձ, սա ի՛նչ բան ա,
«Որ գլխիս դառնայ մահանա.

«Երբ այդպէս է, վերցնեմ լաւ տաւ,
«Շինեմ տեսքով գեղեցիկ բառ».

Եւ յիրաւի, ի՛նչ էք կարծում՝
Այս անգամին վարդ եմ ստանում:

Իմ խնդութեանը չափ չը կայ,
Յաջողութիւնն է աշկարայ:

Բայց դեռ աչքիս չեմ հաւատում,
Այս ու այն մարդուն եմ հարցնում.

— «Ախպէր, ախպէր, էս ի՛նչ բան է,
«Կամ թէ սա ի՛նչ բանի նման է»:

Այս հարցիս վերայ զարմացած՝
Պատասխանում են ինձ ապշած.

— «Վ՛ահ, մի՞ թէ չը գիտես որ դա
«Մի հոտաւէտ կարմիր վարդ ա»:

Հաղիւ թէ հողիս հանդարտուեց,
Զարգած սիրտըս տեղը նստեց:

— «Ուրեմն, ասի, յաջողուեցաւ,
«Վերջապէս մի բան դուրս եկաւ»:

«Ես այս բառիցը խրախուսուած՝

«Արի՛, իբրև մի յաւելուած,

«Ինչ որ կը լինի կը լինի,

«Կողքին մի տառ զնեմ էլի»:

Այս ասելն էր ու մի տղամարդ

Առաջևս կանգնեց՝ ձեռքին զեղարդ:

Դէմքն էր նորա զեղեցկատես,

Աչքեր փայլուն արծուի պէս:

Տեսայ թէ չէ՝ ըզմայլուեցի,

Կատակներըս բաց թողեցի:

Այդ օրուանից, ես իմ վախից՝

Ձեռք վերցըրի բառախաղից:



ՉՈՒԱՐՃԱԼԻՔ

ԳՈՒՌՆ Գ.

Խ Ա Ղ Ե Ր

1

	+	+	Ժամանակ
Գ	+	+	Բայ չէզոքական (զրաբար)
Դ	+	+	Գոյական անուն
Թ	+	+	Գոյական անուն (զրաբար)
Ժ	+	+	Գոյական անուն, հիմնարկութիւն
Ժ	+	+	Ժամանակ
Լ	+	+	Բայ չէզոքական (զրաբար)
Ճ	+	+	Գոյական անուն
Կ	+	+	Բայ չէզոքական (զրաբար)
Կ	+	+	Շաղկապ
հ	+	+	Գոյական անուն
Ճ	+	+	Գոյական անուն
Ղ	+	+	Գոյական անուն
Շ	+	+	Քաղաքի անուն
տ	+	+	Ներգործական բայ
Ք	+	+	Յատուկ անուն

Գտէք աստղանիշ բառը:

2 Հետևեալ վեց քառակուսիների մէջ տեղաւորեցէք մի մի տառ աջնպէս, որ կարդացուի կէտրո-է-է-ն բառը:

--	--	--	--	--	--

3 Հարցականները բաղաձայն տառեր են. իսկ կոչականները ձայնաւոր: Գտէք ինչ առած է:

? ! ? ! ? ! ? ? ! ? ! ? ! ? ? ! ? ! ? ! ?

4 Գասաւորեցէք Ս տառի պատահաններու մի մի տառ գրելով՝ սրժ, Ֆս, սրտհ, սիժ, հարբ և հարս բառերը:

5 Գտէք երեք տառ, երկուսը ձայնաւոր և մէկը բաղաձայն. դասաւորեցէք այս քառակուսիները ինչպէս զայնքան, որ եթէ աջից ձախ, ձախից աջ, վերելից ներքև և ընդհակառակը ներքևից վերև կարդալու լինինք, ստացուի մի մարդու անուն. իսկ եթէ անկիւնագծերի ուղղութեամբ կարդանք, ստացուի քաղաքի անուն:

6 Եթէ այս նկարի թուանշանները փոխարինէք տառերով և կարդալու լինիք նկարի չորս կողմը ինչ ուղղութիւնով էլ կամենաք, կը ստանաք մի անուն՝ որ չատուկ է ձեր մարդոց: Իսկ եթէ կարդաք անկիւնագծերի ուղղութիւնով թէ վտ և թէ առաջ—մի գոչական անուն՝ որ չատուկ է ձու մարդոց. և վերջապէս եթէ խաչաձև կարդաք, կը ստանաք մի չատուկ անուն, որ միևնոյն ժամանակ և հրամայական բաշի եղանակ է:

1	2	1		
	2	●	2	
2	●	3	●	2
	2	●	2	
1	2	1		

7 Ահաւասիկ տասնակից փոքրիկ քառանկիւններ. կազմեցէք սրանցից մի մեծ քառակուսի աջնպէս՝ որ կարդացուի Գամառ-Վաթիպալի մանկական մի ոտանաւորը:

Ս

●	Լ	ո
չ	թ	ու
ու	ը	ն

Ս

ա	●	●
ա	ժ	ի
ն	ա	բ

Փ

ու	ր	ա
ջ	ա	ւ
ժ	օ	ր

Մ

ո	ր	տ
ր	ե	ց
Մ	ա	ն

Ռ

ա	լ	Ս
ո	ր	չ
ա	տ	ու

Ի

ը	●	զ
ի	●	ա
օ	●	ր

Ս

ա	ւ	ն
ը	բ	ե
●	ր	ի

Ս

ր	●	տ
ր	●	ա
ի	●	ն

Ս

ը	ր	տ
ի	օ	ր
ա	կ	հ

Ս

հ	ա	ս
չ	ե	տ
բ	●	ա

Ս

Մ	ա	ն
ե	ն	ու
կ	ա	զ

Ս

ա	յ	ք
ն	ի	ն
զ	ի	ն

Ս

Ս	հ	ա
ա	ր	ի
ն	ո	ր

Ս

●	ո	ց
●	ր	ի
●	ն	ու

Ս

●	ը	զ
●	լ	ու
●	կ	օ

Ս

ր	ի	չ
զ	Փ	չ
կ	ու	զ


Ս

8 Ահաւասիկ ձեզ մի պտուկեցրած սանդուխտ, որ ունի եօթ հատ քառակուսիներ, ղետեղեցէք մի մի տառ աջնպէս՝ որ երբ կարդալու լինինք, ստացուի Արժ և յայտարարութիւն բառերը:

8	յ	ա	չ	լ	ա	ք
---	---	---	---	---	---	---

9 Կախարչական տնիւ


Սպիտակ տարածութիւնը փոխարինեցէք աչնպիսի տառերով՝ որ անխը եթէ խաչածն և շրջապատի ամեն



ուղղութեամբ չկա ու առաջ կարգալու լինիք, ստանաք նշանակութիւն ունեցող բառեր:

Բ

10 Նշանակութիւն Բուրգ




Ահաւասիկ մի բուրգ, որ շինած է 21 քարից, գրեցէք ամեն մի քարի վերայ մի մի տառ աչնպէս՝ որ եթէ Ա-ից մինչև Բ կամ մինչև Գ կարգալու լինիք, ստանաք միևնույն նշանակութիւն ունեցող բառեր. իսկ եթէ մի մի


աստիճան բարձրանաք, ստանաք այլ նշանակութիւն ունեցող բառեր: Պէտք է անպատճառ ձեր զտած բառերով լինին չաղած և քնակարան խօսքերը:

11 Այս քառանկեանց մէջ ղեակղեցէք մի մի տառ աչնպէս՝ որ ու տողում ստացուի մի սարի անուն

Ք	»	»	մատենագրի անուն
Գ	»	»	թուչունի շապիկ
Դ	»	»	գրաբար հրամ. եղ. բայ
Ե	»	»	եղջերաւոր կենդանիներ
Զ	»	»	2 գրաբ. հրամ. եղ. բայեր
Է	»	»	չալանի կաթողիկ. անուն



Պէտք է աչնպիսի բառեր ընտրել, որ սկզբնատառերը եթէ վերևից ներքև կարգալու լինինք, ստանանք մի հաջ վիպասանի ազգանունը. իսկ վերջին տառերը՝ նոյն հեղինակի անունը:



12 Փոխարինեցէք թուանշանները տառերով աչնպէս՝ որ եթէ Ս-ից որ ուղղութեամբ էլ շրջելու լինինք մինչև Կ

տառը, ստանանք նշանակութիւն ունեցող բառեր: Նոյնպէս աշխատեցէք դտնել աջնպիսի բառեր, որ Ս-ից եթէ աստիճան առ աստիճան իջնելու լինինք և մնացորդ աստիճանների տառերը կարդանք, բոլորն էլ իմաստ ունենան:

5	3	6	3	8	3	6	3	5
3	3						3	3
6		6				6		6
3			3			3		3
8				8				8
3			3			3		3
6		6				6		6
3	3						3	3
5	3	6	3	8	3	6	3	5

13 Թուանշանները փոխարինեցէք տառերով այնպէս՝ որ եթէ չեա ու առաջ, ցածից բարձր, բարձրից ցածր կամ ամեն ուղղութեամբ կարդալու լինինք, ստացուին միևնոյն բառերը. նոյնը և անկիւնագծերով: Աշխատեցէք զետեղել այնպիսի տառեր որ՝

- 6+3+6 լինի ձեր մարդու անուն
- բ 3+8+3 » մակբայ
- գ 6+3+8 » մակբայ
- դ 3+6+3 » մակբայ

--	--	--	--	--

14 Ահաւաստիկ կրկին մի սանդուխտ, որ ունի միայն երեք քառանկիւնի. տեղաւորեցէք մի մի տառ զրելով նշանակութիւն ունեցող նախադասութիւններ:


15 Այստեղ նկարած է 39 քառակուսիներ. զետեղեցէք ամեն մի քառակուսու մէջ մի մի տառ այնպէս՝ որ եթէ կարդալու լինինք, 1-ին ստորում ստանանք մի բառ, որ նշանակէ իւրավիճակներին սիրող, 2-ում, քաղաքի անուն, 3-ում, ծառի ճիւղ, 4-ում, լատուկ անուն, 5-ում, գուսանի պաշտօն, 6-ում, մալր ցամաք, 7-ում, նախադրութիւն:

Բացի դորանից՝ եթէ վերևից ներքև հարցականների տեղ դրած տառերը կարդանք, ստացուի մի լատինի մատենագրի աղգանունը. իսկ կոչականների տեղ, եթէ ընդհակառակը ներքևից վերև կարդանք, ստանանք նոյն հեղինակի անունը:


?				!
	?			!
		?		!
?				!
			?	!
?				!
			?	!

16 Եթէ ուշադրութիւն դարձնէք, կը տեսնէք որ վերևից ներքև զրուած տառերը կազմում են «մեծարանք» բառը, որ եթէ հակառակը՝ ներքևից վերև կարդալու լինինք, կը ստացուի «քնար ածեմ» նախադասութիւնը: Այժմ մնացեալ աստղանիշ տեղերը լցրէք մի մի տառ այնպէս՝ որ եթէ աջից ձախ, ձախից աջ կարդալու լինինք, ստացուին կամ միևնոյն բառերը կամ բոլորովին ուրիշ նշանակութիւն ունեցող նախադասութիւններ:

Նրբորդ և հինգերորդ կարգերում կարելի է երկու բառ գրել և չաղկապով միաւորուած:



17 Նշանակեցէք հարցականների տեղ աջակիսի տառեր՝ որ եթէ Ս-ի հետ կարդալու լինինք, ստանանք նշա-




նակութիւն ունեցող բառեր. բացի դորանից տառերը աջակէս դասաւորեցէք, որ 1—5 և 3—7-ը եթէ կարդալու լինինք, ստանանք բալեր:

18 Լցրէք հետևեալ աշտարակի բոլոր քառակուսիները տառերով աջակէս՝ որ եթէ հորիզոնական ուղղութիւնով կարդալու լինինք, ստանանք՝

- 1) Տարում մի բառ՝ որ նշանակէ կառքի մասը:
- 2) Մահմէդականների հոգևորական
- 3) Գոլական անուն
- 4) Քաղաքի անուն (Ռուսաստանում)
- 5) Գոլական անուն, նախդիրով տրական հոլով
- 6) Աղղանուն առանց էս՝ վերջաւորութեան
- 7) Մալր ցամաք
- 8) Քրիստոսի առաքելաւորներից մէկի անունը
- 9) Երաժշտութեան հայրենիք
- 10) Թէ ածական և թէ մի և նոյն ժամանակ չատուկ անուն,
- 11) Պարանոց Ամերիկայում
- 12) Կատաղի բառի համանիշը
- 13) Գեղարուեստի աշխարհ Եւրոպայում
- 14) Մալր ցամաք, սեռական հոլով
- 15) Նահապետի անուն, սեռական հոլով
- 16) Քաղաքի անուն (Տաճկաստանում)
- 17) Աղջկաչ անուն
- 18) Աղջկաչ անուն
- 19) Մակբալ
- 20) Աղջկաչ անուն
- 21) Բալ չէղոքական
- 22) Ամերիկայում մի ծովածոցի անուն:

Իսկ հարցականների և կոչականների տեղ նշանակեցէք աջակիսի տառեր, որ եթէ վերևից ներքև և ներքևից վերև կարդալու լինինք, գտնենք նոյն իսկ հարցի պատասխանը:



ԳՈՒՆ Դ.

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ԿԱՏԱԿՆԵՐ

ԵՐԿԱԹԱՎԱՃԱՌ

1 Մի երկաթալճառ արտասահմանից ստացել էր բաւականաչափ փականներ, և որպէս զի չաճախորդների ուշադրութիւնը գրաւէ, պատերի վերայ կպցրել էր սուել մեծ մեծ տառերով (նամանաւանդ թուանշանները) հետեւեալ յայտարարութիւնը: — «Անգլիական խանութում ստացուեց զանազան ձևի և գների

1 1 1 1 1 1 1 1

հատ նորահնար փականներ. մեծ քանակութեամբ գնողներին քսան պրոցէնտ (20 %) զիջումն կը լինի»: Մի հանաքչի պարոն՝ տեսնելով որ վերոյիշեալ խանութը առ հասարակ իւր յայտարարութիւնները չափազանցօրէն է գրում, ուզեց մի կերպ պատժել այդ ստութիւնը. ուստի գաղտնի և մեծ զգուշութեամբ այդ զարհուրելի թշուանշանը աջակէս ուղղեց, որ ամեն մարդ երբ կարդում էր՝ խկոցն ծի-

Ճաղերով և ճաղերով ասում էր. «Օ՛, տեսէ՛ք թէ
ո՛րքան ապրանք է ստացել. ինքն ի՛նչ քանակութիւն
է, որ 20% զիջումն ինչ լինի:

Արդեօք ի՛նչ էր գրած:

ԱՆՄԵՂ ԿԱՏԱԿ

2 Գործարանում բանուորի մէկը կորցրեց իւր
ձախ ձեռքը. այլ ևս անկարող զտնուելով աշխատել,
լննդիր սուեց գործարանատիրոջ, որ իրան ամսական
քսան և հինգ ռուբլի թոշակ նշանակէ: Գործարանա-
տէրը վճռեց տալ միայն հինգ ռուբլի օժանդակութիւն,
ասելով թէ՛ դեռ կարող ես աջ ձեռքով էլ վաստակել
քո օրական պարէնը: Բանուորը շատ վիրաւորուեց իւր
տիրոջ վարմունքից և յուսահատուած վերցրեց սուրը
ու կտրեց իւր միւս ձեռքն էլ: Այս զարհուրելի դէպ-
քից յետոյ միայն կարողացաւ քսան ռուբլի թոշակ
ստանալ:

Արդեօք արժէ՞ր նրան քսան ռուբլի ամսական նշանակել
եւ կամ ո՞վ է դրանցից արդարացին:

3 Մի թիւ ունիմ, որի թուանշանները երբ յետ
ու առաջ եմ զասաւորում, մէկը միւսից 27-ով թէ՛
աւելի է և թէ՛ պակաս:

Այդ ո՞ր թիւն է:

ԱՌԱՋԳԱԿԱՆ ԱՆՈՒՆ

4 Մի յատուկ անուն գիտեմ, որ եթէ սկզբից
աւելացնեմ Մ տառը, կը ստանամ կրկին յատուկ
անուն. եթէ Մ-ի տեղ աւելացնեմ Գ-ն, կը ստանամ
կրկին յատուկ անուն, և վերջապէս եթէ Գ-ի տեղ աւե-
լացնեմ Ս, այս անգամն էլ կը ստանամ յատուկ անուն:

Իմ դիտեցած անունը ո՞րն է:

ՊԱՅՏԱԶԵՒ ԾԱԲԱՐԱՀԱՅ

5 Լեռնի հայրը պատրաստել էր տուել վեց հո-
գու համար մի շաքարէ հաց (քօրք), որ ունէր հետե-
ւեալ ձևը, բայց աւելի պաշտի նման:

• 3	• 4
2	5
1	6

Թուանշանների տեղ զանազան զարդարանքներ
էին շինած՝ 1-ը վարդ, 2-ը ձու, 3-ը գառն, 4-ը
խաչ, 5-ը թիթեռ և վերջապէս 6-ը սքաղաղ: Ամենքը
ցանկանում էին դառը ստանալ: Լեռնի հայրը առա-
ջարկեց. «Ով որ կարող է երկու անգամ դանակ քտե-
լով վեց կտոր անել, թո՛ղ նրան իբրև վարձատրու-
թիւն զառն լինի»: Ընծան ստացաւ չարածճի Արամը:

Ի՞նչպէս կտրեց:

6 Երկու զիւղացի, երկար աշխատութիւնից յետոյ, նստեցին մի ծառի տակ և իրանց ծարաւը զովացնելու համար հանեցին խուրճիկից ձմերուկներ: Առաջինը հանեց երեք հատ, իսկ երկրորդը երկու: Հէնց այն է՝ պատրաստովում էին կտրատելու, երբ վրայ հասաւ մի երրորդ ծանօթ զիւղացի և խնդրեց որ իրան էլ ուտացնեն, խոստանալով իւր կերածի զինք վճարել: Երկուսն էլ ուրախութեամբ համաձայնուեցին: Սկսեցին հաւասար կտրատել և երեքն էլ հաւասար ապէս ուտել. այդպիսով վերջացրին հինգ ձմերուկն էլ: Վերջինը յայտնեց իւր շնորհակալութիւնը և տուեց քսան և հինգ կոպէկ ասելով՝ «Ահաւասիկ, բաժանեցէ՛ք երկուսովդ, ինչպէս էլ կամենաք. այդ ձեր զխոնարու բանն է»:

Արդեօք ամեն մէկին բա՞նի կոպէկ կը հասնէր:

Կ Ա Տ Ա Կ

7 Ես կարող եմ իմ ձեռքի տաս մատները համարելով շինել տասն և մէկ հատ:

Ի՞նչպէս:

Թ ու ա բ ա ն ա կ ա ն կ ա տ ա կ

8 Մի արաբ մեռնելուց յետոյ իւր երեք որդոց թողեց հետևեալ կտակը.

«Սիրելի զաւակներս, իմ բոլոր ունեցած կարողութիւնս, որ ընդամենը տասն և մէկ հատ ուղտերն են, թողնում եմ ձեզ հետևեալ պայմանով: Քեզ՝ Օմար, տալիս եմ բոլոր եղած ուղտերի կէսը. քեզ՝ Հարուն, տասն և մէկի ճիշդ մի երրորդ մասը. իսկ քեզ՝ Սլի, որ միշտ քչով բաւականացող ես, տալիս եմ միայն մի հատ ուղտ. չը նեղանաս ամենևին: Եղէ՛ք միշտ սիրով, չը զրկէք միմեանց, կատարեցէ՛ք կտակս սրբութեամբ. մեռնում եմ ձեզ օրհնելով»:

Եղբայրները երկար մտածեցին, շատ տեսակ փորձեր արին, բայց ինչպէս ասուած էր կտակում, չը կարողացան ճշդութեամբ բաժանել իրար մէջ: Վերջապէս ճարահատուած զիմեցին իրանց մեծ հոգևորական Շէյխ-ուլ-խլամին: Շէյխը կարգաց կտակը, շատ հաւանեց և այնպէս բաժանեց, որ ամենքն էլ զոհ մնացին:

Արդեօք ի՞նչպէս արաւ:

ՊԱՅՄԱՆԱԿՈՐ ԿԱՄԱԿՆԵՐ

I

11-ին Յունուարի 1890 թ.

ՍԻՐՍԵԼԻՐ ԻՄ ԱՂԷՔՍԱՆՆԻՐ

9 Այս օրերս խմ Արշակիս վարժապետը հրաժարուեց իւր պաշտօնից: Մենք խնայանք, որ ձեզ մօտ ե ընու տարի առաջ տեսած այն հուշակաւոր, պարկեշտ և երկիւղած հաշտաւ պահ մեր որոշեալ պարճաններին կը համաձայնէ: Եթէս այդ առթիւ (ցայտնի չարագործ» է համարում ինձ: Խնդրում եմ դուք ևս համոզեք նրան և անսխալապէս ուղղակիք թէ խօսելու և թէ պայճանաւորուելու: Դուք նորան ասացէք մեզ մօտ արժանութիւն է աստիկ: Նախանձանութիւնը մեր Արշակին կանոնաւոր պատուհաս է ասհանել մեզ համար: Ամէն տեսակ չարանարութիւններ կան պարտաւորապէս: Եթէ որ և է պատճառով չը համաձայնուի՝ զոհեք մի ուրիշին: Խնդրում եմ խոհեմ անձն լինի: Ողջունեցէք ծանօթներս: Աստուծային կարողութեամբ գործերը կարգի դրի: Յոյս ունիմ մեծապէս, որ խնդիրքս անպակաս կը կատարէք:

Մօսկուա.

Մնամ քո Նիկողայոս

Պ Ա Տ Ա Ս Ի Ն Ա Ն

II

21-ին Յունուարի 1890 թ.

ԱԳՆԻՒ ՆԻԿՈՂԱՅՈՍ

10 Ահաւասակ այն օրերէն թիւները, որ ևս ժողովեցի նորա մասին, զիտեք որ այդ մարդը՝ որին դուք եր կու տարի առաջ տեսաք մեզ մօտ, ներկայումս Փարիզումն է: Կար ժամանակ որ մն ուրիշասին չը տեսած՝ աստիկ հաւանում էիք և շատ էլ զովում էիք. խիղճն պատ ուրիշեցի նորան զայ ձեզ մօտ: Տեսէ՛ք, պ. Նիկողայոս, չը մերժէք խնդրեմ այդ լր արդասեղ և հմուտ հարուստահին: Նա պատկանում է մեր կրթութիւն, քանի կարելի է շուտ օրերէք ինձ հետեւանքի մասին, լաւ է հեռաղրով քան փութաւ: Նուտ ուղղակիք ձեզ խոստացած զիրքը. մեզ մօտ ստանանիք է—խի և խի Սիբիր:

Թիֆլիս.

Մնամ քո Աղէքսանդր

Ողորմելի Մտիրիոսը՝ մեր հմուտ հաշուապահը,
վերջին նամակը ծոցը դրած ուրախ-ուրախ ճանա-
պարհ ընկաւ Նիկողայոսի մօտ. բաց վերջինը կա-
տարեց նամակի բովանդակութիւնը ճշգուծեամբ և
նորան շղթայակապ աքսոր ուղարկեց:

Նիկողայոսը կամ Աղէքսանդրը ի՞նչ էին գրած իրանց
նամակներում:

Հ Ա Ն Ո Ւ Մ Ն

11 Ձորս աշակերտ դէմ առ դէմ նստած էին սե-
ղանի շուրջը: Գոցանից Արշակը և Գարեգինը վիճում
էին մի հասարակ հանման գործողութեան վերայ:
Արշակն ասում էր անկարելի է հանել. իսկ Գարե-
գինը պնդում էր թէ՛ մնացորդը մեր դասատան մէջ
գտնուող աշակերտներից էլ շատ է: Բազրատը պաշտ-
պանում էր Արշակին, իսկ Արսէնը Գարեգինին: Վերջը,
երբ խնդիրը պարզուեց, տեսան որ ամենքն էլ ճշմա-
րիտ էին:

Արդեօր ի՞նչ էր գրած եւ կամ ի՞նչ հնարքով կարելի էր
միեւնոյնը առանց վիճելու վերջացնել:



Խ Ն Դ Ի Ր

12 Մէկ օր մեր անտուշը, որ ոռուսերէն լե-
զուի ուսուցիչն էլ էր, Սուրբ Գրքից մի տուն գրեց:
Եթէ յիշողութիւնիցս չէ դուրս եկել, ես կը գրեմ
հէնց էս տեղ: Պէտք է որ հսպէս լինէր. «Ոչ երկի-
ցես դու յերկիւղէ գիշերի և ոչ ՚ի նետէ, որ թռչի
՚ի տուէ»:

— Էս երկու տող գրութիւնը մի հեշտ խնդիր
է և էն էլ ի՞նչպիսի, խօսեց մեր ուսուցիչ Սիմէօնը.
Եթէ ուղէք և մի փոքր էլ խորհէք, խսկոյն գլխի
կ'ընկնէք և կը զանէք թէ ի՞նչումն է խնդրի իսկ և իսկ
բուն զօրութիւնը:

Մենք բոլորս էլ սկսեցինք էս ու էն կողմն ընկ-
նել, մի երկու օր խորհել—Ֆո՛ւ, բոլորն էլ ի զուր-
օգուաներս էն էր—օրերի կորուստ: Վերջ ՚ի վեր-
ջոյ մեր ընկերներից մէկը, որ բոլորիս սիրելին էր՝
Գուրգէն Բզնունին երրորդ օրը բերեց մի ինչոր
փոքրիկ վէպ, որի գլխին գրել էր՝ «Արջիւն և Թըռչ-
նիկ» ու ցոյց տուեց ուսուցչին, որի երեսին ժպիտ
էր երևում:

— Տեսէ՛ք, սիրելի ուսուցիչ, խօսեց Գուրգէնը,
իմ խելքով էս պէտք է լինի խնդրի ճիշդ լուծումը.
ուղի՞ղ է թէ ոչ:

— Գեղեցիկ, կեցցե՛ս, իմ ուշիմ, խելօք Գուր-
գէնիկս, իսկ և իսկ էս է. իսկ դուք, սիրելի ընթեր-
ցողներ, լսեցէ՛ք և անսէ՛ք թէ ի՞նչ է գրել ձեր ըն-
կեր Բզնունին:

—Մենք բոլորս էլ լսում ենք:
Ուսուցիչը սկսեց պինդ ձենով ընթեռնուկ ներ-
քելի վեպիկը, մէկ մէկ շեշտելով խօսքերը:

ՄՐՁԻՒՆ ԵՒ ԹՈՉՆԻԿ

Երեկոյ էր: Մի խեղճ փոքրիկ մըջիւն՝ մէկ ծուռ-մոռ կոճղի վրէն ոչ զգոյշ զբօսնելիս՝ զլո-
րուեց դէպի ջուրը և քիչ էր մնում որ խեղզուէր:
Ողորմելի զեռունը երբէք էլ յոյս չ'ունէր թէ իրեն
մի որ և է տեղից օգնութիւն կը լինի: Նոյն միջո-
ցին մի սիրուն թռչնիկ՝ որ նստել էր եկեղեցու
զմբէթի զլիսին ու էս ու էն իրն էր դիտում, տես-
նելով մըջիւնի նեղ զրութիւնը, մորմոքուեց իւր
քնքոյշ սրտիկը և վճռեց օգնել ողորմելուն: Վերջ 'ի
վերջոյ, մի երեք-չորս բոպէ խորհելուց յետոյ, մի տերև
ձգեց ջրի մէջ ու սոյն կերպով փրկութիւն տուեց
խեղճ զեռունին:

Մի օր էլ մի գոռոզ և լիրբ որսորդ, որ իւր յետ-
քից եօթը թէ ութ զոյգ մեծ-մեծ թռչուններ էր
թրևում, տեսնելով մեր փոքրիկ մըջիւնին փրկող
ճնճղուկին, որը էդ միջոցին կտուցը կոխել էր
փետուրների մէջ ու իւր բնի մօտ քնել էր, ուղում
էր ողորմելուն մեռցնել: (Նկը զիտէր էդ զճուճի
զլուխը, թէ ի՞նչին էր պէտք ճնճղուկը, մինչդեռ ինքը
եօթ թէ ութ զոյգ ուրիշ թռչուններ էլ ունէր): Ննչ և է,
զիժ որսորդս հէնց էն է թօփը վերցրեց և ուղղեց, որ
ինչ է զլորէ ճնճղուկին՝ մէկ էլ տեսնես, որ տեղից

որ էր, ինչ կերպով, ինչ միջոցով մեր մըջիւնը ձեռքի
վրէն երևեց ու մի էսպէս պի՛նդ կճեց էդ լրբի ձեռքը,
որ վերջինը կսկծից խսկոյն դէն ձգեց իր թօփը: Եդ
էլ հերիք էր, էսպէսով մեր մըջիւնը միջոց տուեց
թռչունին թռչել հեռո՛ւ, խիստ հեռու, զեռ նոյն
խակ զետիցն էլ էն կողմը: Զեռունը տեսնելով իւր
փրկիչ թռչունին ջրի էն կողմն, ինքն էլ սկսեց դժի
պէս թռչկոտիլ էս կողմը: Ինչո՞ւ:

Գէ՛ն, սիրելի ընթերցողներ, գտե՛ք թէ ինչո՞ւմն է խնդրի
լուծումը:

ԵՐԵՒ ՏԵՍԱԿ ԳԻՆԻ

13 Մի ծառային տունն տասը բուբլի և պատ-
ուիրեցին որ զնէ երեք տեսակ զինի, թունգին 3
բուբլիանոց, 50 կոպէկանոց և 20 կոպէկանոց. բայց
աշխատի որ զնած զինին ընդամենը լինի 10 թունգի,
այնպէս որ եթէ այդ բոլոր զինիքը խառնէ 'ի միասին,
թունգին արժենաց մի բուբլի: Ծառան կատարեց տի-
րոջ հրամանը:

Արդեօք ամեն մի տեսակից ո՞րքան զնեց:



14 Սօսիւն, Սուրէն, Սմբատանոյ՜*
Կորիւն, Խորէն, Խոսրովանոյ՜*
Պարոյր, Վրոյր, Աստուածատուր,
Աբգար, Մարգար, Տէր-Խաչատուր:

Աղնիւ, Արտակ, Երանուհի*,
Պապ, Վաղինակ, Տիգրանուհի*,
Հայկ, Արմենակ, Սօս, Պերճուհի*,
Ղևոնդ-երէց, Վան, Զարուհի*:

Րուզան*, Արա, Էփէմիա*,
Շուշան*, Աննա*, Փեփրոնիա*,
Պերճ, Գոհարիկ*, Կամսարական,
Վարդան, Դստրիկ*, Զապէլ*, Տիգրան:

Դրաստամադ, Աշխէն*, Վիրգինէ*,
Արսէն, Արմէն, Մանէ*, Նունէ*,
Անոյ՜*, Հռիփսիմէ*, Քրիստինէ*,
Գիւցազնուհին մեր Կարինէ*:

Արգամ, Ասպրամ*, Յուսիկ, Լուսիկ*,
Վահրամ, Արամ, Գաղիկ, Պապիկ,
Հրանտ, Կոմիտաս, Արիստակէս,
Ներսէս, Աբաս, Ասպուրակէս:

1) Աստղանիշ անունները իրական են:

Ռուբէն, Ղևոն, Աշոտ, Արշակ,
Պարթևանոյ՜*, Վարդ, Մանիշակ*,
Բագրատ, Սմբատ, Արփիկ*, Գիսակ,
Տրդատ, Մխրրդատ, Սիսակ, Միսակ:

Երուանդ, Հայկակ, Նեքտարինէ*,
Մամբրէ, Մաժակ, Կատարինէ*,
Եզնիկ, Հմայեակ, Յուլիանէ*,
Վահէ, Կոռնակ, Յուստիանէ*:

Աստղիկ*, Սուրիկ, Անանիա,
Զօջիկ, Զանիկ, Հերմոնիա*,
Անուշաւան, Ծեր-Ալիշան,
Բարդիշան, Վարդիէս, Նշան:

Մաղիկ*, Գուրդէն, Սահականոյ՜*,
Բաբկէն, Արուսեակ*, Սիրանոյ՜*,
Սամուէլ, Ծաղիկ*, Սուրբ-Կարապետ,
Գնէլ, Հեթում, Մեծ-Հայրապետ:

Յոբակ, Մեսրոպ, Խոսրովիւուխա*,
Սեդրակ, Զենոբ, Հրաչեաց, Սանդուխա*,
Նորայր, Թորգոմ, Սեմ, Արագոտ:
Զարմայր, Ատոմ, Գիւտ, Փարսխոտ:


Արանց ազգանունն ի՞նչ է:



ԵՐԿՈՒ ԱՌԻՒԾ

15 Մի շտախանդացի, որ կրկեսի կառավարին էր, իւր յաճախորդների ուշադրութիւնը գրաւելու համար պատուիրեց, որ իւր միւս բաժանմունքից ուղարկեն երկու հատ ամենայայտնի առիւծներ: Այդ առիւծներից մէկը՝ որի անունը Մահ էր, Աֆրիկայի խորքերից էր բերած, երբ դեռ կորիւն էր. իսկ միւսը՝ Գժոխքը — Բենգալիայից: Գոքա երկար ժամանակ ապրելով իրար հետ՝ առ երես շատ հաշտ էին. բայց բանիցը երևաց, որ այդպէս չէր: Կրկեսի տէրը աւելորդ ծախսին չ'ենթարկուելու համար՝ վարձել էր միայն մի վագոն երկուսի համար էլ. թէև երկաթուղուց վարչութիւնը սկզբից չէր համաձայնվում, բայց վերջ 'ի վերջոյ շտախանդացու կամքը կատարուեց, և ո'րքան եղաւ նորա զարմանքը, երբ վագոնը բաց արին և տեսան երկու գլխները միայն: Այդ արիւնարբուք կատաղութիւնից իրար կերել էին:

Արդեօք մեղաւոր չէ՞ր կրկեսի տէրը:




ԳՈՒԽ Ե.

ՐԵԲՈՒՍՆԵՐ (ժամկանկարներ *)

ԵՒ

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

1




*) Ձեռքի տակ չ'ունենալով մեր տպուած և թէ անտիպ բերուածների կլիշէները, վճուեցինք բոլոր ժողովածուն № 2-ում տպագրել. այժմ բաւականաճում ենք միմիայն այս երեքով:

Մի բարերար պարոն իւր տանը պահում էր մի կոյր մարդ, որին թէ կերակրում, թէ խմացնում և թէ հագցնում էր ձրիաբար: Վերոյիշեալ կոյրը վերին աստիճանի ազահ էր. ինչքան էլ որ կուշտ կերակրէին, խմացնէին՝ մի և նոյն էր նորա համար, այնուամենայնիւ պէտք է տրանջար ասելով. «Նս քաղցած եմ, շատ քիչ է կամ հին է և այլն»: Մառաները ձանձրացել, համարեա զգուել էին նորանից. ուստի միանգամ յայտնեցին իրանց տիրոջը, որ այլ ևս անկարող են ծառայել այդ կոյրին, որը համբերութիւնից հանում է իրանց:

Պարոնը չիրաւի ուզեց փորձել թէ ո՞րքան ճշմարիտ էր ծառաների բողոքը. ուստի պատուիրեց որ մի ամբողջ գառն խորովեն և թաւացով առջևը դնեն: Կատարուեց հրամանը: Բայց ի՞նչքան ծիծաղեցին վերջը, երբ կոյրը ձեռքերով շոշափեց և ասաց. «Պա՛հ, պա՛հ, պա՛հ, եթէ որ իմ բաժինը այսքան է, հապա ձերը ո՞րքան պիտի լինի»:

Վերջը, երբ կոյրը հասկացաւ այս խորամանկութիւնը, ամօթից այլ ևս չէր տրանջում:



Բաղդադի խալիֆաներից մէկը շինել տուեց մի անկեղանոց, որի ճակատին ոսկեզօծ տառերով արաբերէն գրած էր՝ «Բացառապէս ծոյլերի համար»։ Խալիֆան սորանով ուզում էր իմանալ թէ արդեօք ո՞րքան դատարկաշրջիկ և անգործ մարդիկ կան քաղաքում, որոնք ծուլութիւնն իրանց համար բան ու գործ են շինել։


Անկեղանոցը, կամ աւելի լաւ է ասել ծուլարանը՝ ամեն յարմարութիւններ ունէր. լաւ ուտացնում էին, խմացնում, հագցնում։ Զանցաւ կարճ միջոց և ահա այլ ևս ազատ տեղ չը կար այդ ահագին շինութեան մէջ. խնդրատուններն օր աւուր շատացան, քաղաքը դատարկաշրջիկներով լցուեց, յուսարով որ մի օր էլ հերթն իրանց կը հասնի և կ'արժանանան այդ «երկրային արքայութեանը»։

Խալիֆան տեսնելով, որ փոքր 'ի շատէ գործ ունեցողն էլ թողեց իւր արհեստը և ձրխակերութիւնը գերադասեց՝ մտածեց հետեւեալ խորամանկ միջոցին դիմել։ Հրամայեց իւր ծառաներին, որ մի օր, ծոյլարանի բնակիչներից զաղտնի, կրակ տան ամբողջ շինութիւնը. բայց միևնոյն ժամանակ զգոյշ լինին, որ մարդ չը կորչի։ Այդպէս էլ եղաւ։ Կէս գիշերին ջանկարճ աղմուկ լսուեց ամեն կողմից՝ «հրդեհ», հրդեհ», և բոցը լուսաւորեց ամբողջ քաղաքը։ Ծոյլարանը տակն ու վրայ եղաւ, թամբալները քաջացան, վազող վազողի եղաւ. ծառաները շրջում էին

սենեակից սենեակ, վրակ դռները կոտրատում, ամեն կերպ ճանապարհը հարթում, օգնութիւնը հեշտացնում։ Տաս րոպէ չ'անցաւ, դատարկուեց ամբողջապէս ծոյլարանը. իսկ բոցը շրջապատել էր բոլոր շինութիւնը։

Բայց ո՞րքան եղաւ ծառաների զարմանքը, երբ սենեակներից մէկում տեսան երկու ծոյլեր պատկած անկողնում անշարժ և անտարբեր։ Ոչ մէկը չէր աշխատում իւր զլուխն ազատել. միայն մէկը, տեսնելով որ արդէն ծուլը խեղդում է և բոցն էլ ուզում է պատուհանից ներս մտնել, սկսեց գոռալ. «օգնեցէ՛ք, այրվում եմ, 'ի սէր Աստուծոյ օգնեցէ՛ք»։ Երկրորդ թշուառականը մինչև անգամ ծուլանում էր «օգնութիւն» կանչելու, այլ խնդրում էր ընկերից, որ իւր փոխարէն ևս գոռայ «օգնեցէ՛ք, ես էլ եմ այրվում»։ Ծառաները այլ ևս չը կարողացան համբերել, դուրս բերին այս խելագարներին մրոտած և համարեա թէ խանձուած։

Երբ խալիֆային հաղորդեցին այս իրողութիւնը, վերջինս չը կարողացաւ իւր ծիծաղը բռնել և ասաց. «Ուրեմն, իմ քաղաքում իսկապէս երկու ծոյլ մարդիկ են զանուկել, որոնց Աստուած ամենախիստ կերպով պատժել է։ Երբև ողորմութիւն, կերակրեցէ՛ք միմիայն այս երկու խելագարներին. իսկ եթէ այսուհետև տեսնէք առողջ մարդ՝ անգործ, դատարկապորտ, որը ողորմութիւն լինի խնդրելիս, իսկոյն կ'ուղարկէք նորաչէն ծոյլարանը, — այն է՝ բանտը։



Գ... գիւղի տէր-Աւետիք քահանան իւր որդուն ամուսնացնում էր նոյն գիւղի մի հարուստ օրիորդի հետ: Հարսանիքը աւելի շքեղ կատարելու համար, հարկաւոր համարեց զնալ քաղաք և մի քանի անհրաժեշտ իրեղէններ գնել. ուստի վերցրեց երեք հարիւր ռուբլի ոսկի փող, նստեց ձի և դէպի քաղաքն ուղևորուեց: Արդէս զի ճանապարհին աւազակների ջարձակումներին չ'ենթարկուի, կասկածը փարատելու համար, հազաւ իւր ամենահին պատաստած փարաջան:

— Անշուշտ ինձ աղքատ քահանայ կը կարծեն և ձեռք չեն տաց, գուցէ և խղճալով ողորմութիւն էլ տան, ասում էր տէր հայրը ինքնավատահ:

Հազիւ թէ տէր-Աւետիքը անցել էր ճանապարհի կէսը, յանկարծ տեսաւ որ իւր յետևից աւելի արագաբայլ գալիս է մի ուրիշ ձիաւոր, ոտից գլուխ զինաւորուած: Տէր հայրը սկզբից բաւականին շփոթուեց, բայց տեսնելով որ անձանթ պարոնը գլխարկը հանեց և ողջունում է, սիրտը մի փոքր հանդարտուեց:

— Օրհնեա՛, տէր:

— Աստուած օրհնեցէ:

— Դէպի ո՛ւր, տէր հայր:

— Քաղաք, որդի, պատասխանեց տէր-Աւետիքը խղճալի ձայնով:

— Աւելի լաւ, ասաց աւազակապետը, ուրեմն ես

ձեզ կ'ընկերակցեմ, երկուսովս աւելի ուրախ կը լինենք ճանապարհին:

—Ննորհակալ եմ, որդի, դուք ո՞րտեղից էք գալիս:

—Ես երեւանցի եմ, զնու՞մ եմ Տփլիսս ասարանք զնելու:

Քահանան բոլորովին հանգստացաւ և դեռ ուրախ էր որ իրան պաշտպան էլ գտաւ. նոքա երկար ժամանակ զանազան հարցերի վերայ խօսելով զնացին մօտ տասն և հինգ վերստ տարածութիւն: Մութը արդէն կոխել էր. էլ աւազակը չէր կարող երկար համբերել, ժամանակ էր հաշիւները մաքրելու. բայց նախ քան կողոպտելը՝ ուզում էր իմանալ թէ արդեօք ո՞ւնի քանի մի բուբլի փող իւր վերայ թէ ոչ, կամ արժէ թալանելը, կողոպտելը. ուստի առանձին զարմանքով հարցրեց.

—Տէ՛ր հայր, դուք կարդացած մարդ էք, արդեօք ճի՞շդ է, որ ասում են թէ ոսկին երբեմն աքաղաղի նման ձայն է հանում. ինձ մի քանիսը հաւատացնում են որ իբր թէ այդ ուղիղ է:

—Է՛հ, սո՛ւա բան է, զաւակս, այդ անկարելի է. եթէ այդ խսկութիւն լինէր, ինձ վաղուց պիտի լինէր յայտնի: Ահա վեց ժամից աւելի է ճանապարհի վերայ եմ և ոչ մի անգամ ձայն չը հանեց. խուրջինս ոսկով լիքն է, եթէ այդպիսի բան լինէր, մինչև հիմա դոնէ մի վեց անգամ կը բղաւէր «ծուղբուղո՛ւ»:

Աւազակի ուզածն էլ այդ էր, էլ երկար չը համբերեց և ասաց.

—Տէ՛ր հայր, նեղութիւն կրիր ձիուց ցած իջնել, ինձ քո ոսկիներն են հարկաւոր, էլ խօսել հարկաւոր չէ. ճանաչի՛ր ինձ, ես այս ինչ աւազակապետն եմ: Տո՛ւր ինձ այդ փողերը, դու հողեօրական մարդ ես, լաւ չէ որ փողեր ունենաս:

Քահանայի գոյնը մի քանի անգամ փոփոխուեց, ծնկները ծալծրուեց, թուքը ցամաքեց, շատ խնդրեց, պաղատեց, բայց ի զուր: Աւազակի սիրտը վաղուց էր քարացած, նա մինչև անգամ սրով սպառնաց, եթէ որ և է ընդդիմութիւն կը ցոյց տայ:

Տէր-Աւետիքը ուրիշ էլ հնար չ'ունէր, հանեց ոսկիները և արտասուալից աչքերով տուեց բոլորն էլ իւր ճանապարհորդակից կարծած ընկերոջը:

—Ննորհակալ եմ, տէ՛ր հայր, ասաց աւազակը հեգնօրէն. այսուհետև այլ ևս չը զարմանաս, երբ քեզ հարցնեն թէ՛ սո՛ւղիղ է որ ոսկիները աքաղաղի պէս ձայն կը հանեն: Տեսա՞ր որ այդ ճշմարիտ է եղել. փոյթ չէ, թո՛ղ այս խրատ լինի, միւս անգամ աւելի զգոյշ եղիր: Տէ՛ր հայր, մնում է մի պահպանիչ էլ ասէք:

Քահանան ճարահատեալ պահպանիչ ասաց, որի համար ստացաւ մի ոսկի վարձատրութիւն: Հարսանիքը մի տարով յետաձգուեց:



ԳՈՒԽ Զ.

ՖՕԿՈՒՍՆԵՐ ԿԱՄ ԿԱԽԱՐԴԱՆՔ

1

Եթէ երբևիցէ կամենաք զուարճացնել ձեր ծա-
նօթներին Ֆօկուսներով, պէտք է անպատճառ. դիտե-
նաք հետևեալ պայմանները.

1. Մինչև առանձնապէս շատ չը վարժուէք որևէ
Ֆօկուսի մէջ, չը կրկնէք նոյնը հանդիսականի առաջ:

2. Միևնոյն Ֆօկուսը նոյն մարդու ներկայու-
թեամբ երբէք չը կրկնէք նոյն օրը:

3. Եթէ Ֆօկուսը բարդ չէ և կարող են շուտ
գլխի ընկնել, նախ քան կատարելը չը յայտնէք հանդի-
սականին թէ ի՛նչ էք անում:

4. Անհրաժեշտ է, որ կախարդը լինի ճարտա-
րախօս, զուարճախօս. երբեմն մի սրախօսութիւնը
կամ անեկզոտը օգնում է, այսինքն միջոց է տալիս
մի երկրորդ Ֆօկուսը յաջողեցնելուն:

5. Կախարդանքին նոյնպէս օգնում են նորա
հազուստը, ձեռքի դաւազանը, մանաւանդ փող կամ
մանր առարկաներ թաղցնելու ժամանակ:

Կ Ա Տ Ա Կ

Վառած մոմը այնպէս անել, որ հանդիսական-
ներից մէկը չը տեսնէ, իսկ մնացեալները տեսնեն
եւ չը տեսնողը համոզուած լինի որ, բացի իրանից,
ամենքն էլ տեսնում են:

Այս Ֆօկուսը շատ ծիծաղաշարժ է նամանաւանդ
գործողութեան ժամանակ: Ձեզ հակառակորդ պարո-
նին նախ՝ կը ցոյց տաք վառած մոմը (եթէ մոմ չը
լինի, կարելի է ուրիշ որևէ աչքի ընկնող առարկայ
վերցնել) և կը հարցնէք. «Պարոննե՛ր, դուք ամենքդ
էլ տեսնում էք այս վառած մոմը. այժմ կամենում
եմ որ միայն այս պարոնը չը տեսնէ: (Սը չիշէք որ և է
ձեր ծանօթի անունը, կամ ում գլխին ձեր Ֆօկուսն
էք կատարում): Ահա առաջիկ. այս ասելով՝ հանդիսաւոր
կերպով կը վերցնէք աշտանակը կամ հէնց մոմը, կը
խնդրէք որ բաւականին՝ ճիշդ մի բոպէ, լուռ մնան և չը
շարժուին ամենքն էլ. ասացէ՛ք որ կարող է Ֆօկուսը
քանդուել: Յետոյ կը բռնէք բարձր, ուղիղ հակառակորդ
պարոնի գազաթին. ի հարկէ որ ամենքը կը տեսնեն,
բացի նորանից և ինքն էլ համոզուած կը լինի այդ
բանում: Ընդհանուր ծիծաղ:




ԿԵՂԾ ՀՆԳԱՆՈՅՆԵՐ

Թէ ի՛նչպէս հնգանոցները դարձնել ասեր կամ տուզեր, տուզերը վերածել կրկին հնգանոցների եւ վերջապէս բոլոր խաղաժողովերը ձերմակացնել:


Այս հետաքրքիր Ֆօկուսը յաջողութեամբ կատարելու համար պէտք է ունենալ խաղալու չորս հատ (ամեն մաստերից) հնգանոցներ, երկու հատ տուզ,

Հ ն գ ա ն ո ց ն ե Ր

չերվա—սիրտ բուրնա—աղիւս տրէֆ—խաչ պիկ—ազուս




մինը տրէֆը, միւսը պիկ, կամ մինը չերվա, միւսը բուրնա: Աերոյիշեալ խաղաթղթերից տուզ պիկը պէտք է զգուշութեամբ քերել սուր դանակով եւ կը ստացուի բոլորովին ձերմակ թուղթ: Տրէֆ տուզը եւ




տրէֆ հնգանոցը պէտք է թողնել նոյնութեամբ. իսկ մնացեալ երեք հնգանոցներից պէտք է շատ զգուշութեամբ ներքին երկու անկիւններում գտնուած երկու

երկու աչքերը սեռնով կամ դանակով քերել այնպէս՝ որ լոյսի վերայ չ'երևան քերուած տեղերը: Այն ժամանակ մէնք կը ստանանք կեղծ հնգանոցներ կամ, աւելի ճիշդ ասած, եռանկիւնի նկարած երեքանոցներ:




Ուրեմն նախ քան Ֆօկուս կատարելը՝ մէնք պէտք է ունենանք ձեռքերնիս վեց հատ խաղալու թուղթ, որոնցից մէկը բոլորովին ձերմակ, մէկ հատ տրէֆ տուզ, մէկ հատ տրէֆ հնգանոց եւ երեք էլ կեղծ հնգանոցներ:

Առաջ առաջ հանդիսականներին պէտք է ցոյց տաք չորս հնգանոցները հետեւեալ կարգով. նախ՝ երեք




կեղծ թղթերը եւ յետոյ երեսանց ծածկած ճիշդ տրէֆ հնգանոցը, ոչ թէ մէկ մէկ, այլ չորսը միասին ձեռքի մէջ բացուած. այն ժամանակ դժուար կը լինի զլխի ընկնել թէ տրէֆի տակ գտնուածները կեղծ են, որովհետեւ հանդիսականները կը կարծեն թէ ներքին անկիւններում եղած աչքերը տրէֆի տակն են ծածկուած:

Երբ որ համոզուեցան որ այդ բոլորն էլ հնգանոցներ են և ոչ ոք չը հետաքրքրուեց, նշանակում է Ֆոլուսը կատարեալ յաջողուեց: Դուք այն ժամանակ կ'առաջարկէք՝ կամենո՞ւմ էք արդեօք որ բոլոր հնգանոցները ասեր (տուզ) դարձնեմ կամ թէ բոլորն էլ ձերմակացնեմ:—Այդ միջոցին սեղանի վերայ ընկած կը լինի քերուած ձերմակ թուղթը և մէկ հատ տրէֆի ասը:




Եթէ, օրինակի համար, ուզենան ասեր դարձնել այն ժամանակ դուք կը վերցնէք չորս հնգանոցը, կը բռնէք ձախ ձեռքում կարգով բացուած և կասէք. «Շատ բարի, ուրեմն առաջ դարձնենք ասեր: Տո՛ւր ինձ առաջ այդ տրէֆի ասը և վե՛ր առ փոխարէն տրէֆի հնգանոցը»: Կը վերադարձնէք հանդիսականին տրէֆի հնգանոցը, յետոյ ձեռքի մէջ զգուշութեամբ կը սկսէք խառնել, մատներով սուտ սուտ տրորել, փշել, որպէս թէ կախարդութեամբ ուզում էք խաղաթղթերի աչքերը ջնջել, անհետացնել: Այդ միջոցին կեղծ հնգանոցները կը դարձնէք ձեռքերնիդ մէջ, քերուած անկիւնները վերև, իսկ չը քերուածները ներքև:




Իսկական տրէֆի տուզը կը ծածկէք դրանց վերայ և կը բանաք այնպէս՝ որ ներքին անկիւնները ծածկուին իսկական տուզ թղթի տակ և երբ կը բանաք՝ յանկարծ կ'երևան չորս հատ տուզեր և կը սկսէք կարծ միջոց, ձեռքի մէջ շարժելով թղթերը, իւրաքանչիւրին ցոյց տալ և ասել. «Այս ի՞նչ է թէ տուզեր չեն, տո՛ւզ է թէ ոչ. ահա քեզ տուզ, ահա քեզ տուզ»:

Եթէ ուզում էք ձերմակացնել, տրէֆ տուզը կը վերադարձնէք և փոխարէնը սեղանից կամ հանդիսականի ձեռքից կը վերցնէք բոլորովին քերուած ձերմակ թուղթը և կրկին նոյն կերպով կը դասաւորէք, այ-



սինքն նախկին տրէֆ տուզի տեղը և կը բանաք թղթերը. բայց այս անգամին այնքան պիտի բանաք, որ այլ ևս տուզերը, այսինքն միջին մաստերը չ'երևան. այլ լինին բոլորն էլ ձերմակ:

Եթէ նորից ուզենան հնգանոցներ շինել, դուք



կը վերադարձնէք ձերմակը և փոխարէնը կը վերցնէք

հնգանոցը. շուռ կը տաք, ինչպէս առաջին անգամ, թղթերը դլիի վայր (այս անգամ քերուած մասերը ներքև) և կը ծածկէք ճիշդ հնգանոցով. բոլորն էլ կ'երևան ինչպէս ճիշդ հնգանոցներ:

Զգուշացէք նոյն մարդու ներկայութեամբ կրկնել Փօկուսը, նամանաւանդ հետաքրքիրներից: Այս Փօկուսը բաւականին զուարճալի խաղ է: Նախ քան հանդիսականների կամ հիւրերի առաջ կատարելը, պէտք է առանձին շատ վարժուել ճարպիկութեան մէջ: — Ծօկուսի ժամանակ զուարճախօսութիւնը առաջին պայմանն է:

Եթէ հանդիսականների մէջ եղան հետաքրքիրներ և ուզենան ձեր խաղաթղթերը տեսնել, պէտք է վաղօրօք պատրաստի միջոցներ ունենալ կասկածանքի առաջն առնելու: Դորա համար նախ՝ պէտք է նազ անէք, յետոյ՝ պէտք է վստահ յայտնէք թէ. «Շատ բարի, կը ցոյց տամ, բայց եթէ ոչինչ դադանիք չը լինի, ո՞րքան էք վճարում տուգանք»: Եթէ այդ միջոցները չ'օգնեցին և զտնուեցան հետաքրքիրներ, որ ձեր բոլոր առաջարկած պայմաններին համաձայնուեցին, այն ժամանակ դուք դժգոհութիւն կը յայտնէք և կ'ասէք. «Մի՞թէ Փօկուս կատարողը կը ծանօթացնէ իր գործիքների հետ. բայց ոչինչ, ես այս բանումն էլ համաձայն եմ»: Այդ միջոցին խաղաթղթերը ձեր ծոցի զրպանումը կը լինին դարտուած, իբրև թէ էլ չէք ուզեցել շարունակել Փօկուսը: «Համեցէ՛ք, պարոններ, ես ոչ ձեր վարձատրութիւնն եմ ուզում և ոչ էլ զրազը. եկէ՛ք կաս-

կածոսներ, տեսէ՛ք, այս թղթերը կե՞ղծ են»: Այս ասելով կը ձգէք յանդգնաբար ճիշդ խաղաթղթերը՝ չորս հատ հնգանոցները, մի տրէֆ տուզը և մի քերուած ձերմակ թուղթը: Աշխատեցէ՛ք չը մոռանալ, որ միւս երեսը նման լինի առաջինին, այսինքն միակերպ կալօղի թղթեր լինին: Բացի դորանից, որպէս զի զրպանի մէջ կեղծ թղթերը չը խառնուին իսկականների հետ, դուք վաղօրօք կ'ունենաք մի կազմած յիշատակարան, որը ճիշդ երկու մասերի կը բաժանէ ձեր զրպանը. երեսի կողմը կը զնէք կեղծերը, իսկ աստառի կողմը՝ ճիշդ թղթերը: Հարկաւոր ժամանակ կը հանէք որն որ ուզենաք:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԿՈՂ ԴՐԱՄ

Վերցրէ՛ք մի երկար և շէկ մազ, ամբացրէ՛ք մի ծայրը ձեր վերարկուի կոճկատեղից, իսկ միւս ծայրը մեղրամոմով կպցրէ՛ք որ և է փոքր դիրքով փողին: Յետոյ դրեցէ՛ք փողը մազի երկարութեամբ ձեր ձեռքի ափի վերայ և կը տեսնէք, որ ի՛նչ չափով էլ դուք ձեր ձեռքը կը հեռացնէք ձեզնից, նոյն չափով էլ փողը կը մօտենայ ձեզ:

Հանդիսականը չի կարող նկատել, նամանաւանդ երբ դուք կը կատարէք զիշերով, այսինքն ճրագի լոյսով և բաւական հեռու հանդիսականներից: Զը մոռանաք, որ մեղրամոմը պէտք է կպցնել փողի թարս երեսին:

ԿԱՌԱՐԻԱԿԱՆ ՍՈՒՐ

Այս Ֆոկուսը մի փոքր թանկ արժէ, որովհետեւ պէտք է ունենալ առ նուազն քսան կալօղ թուղթ, իսկապէս երեսուն երկու կալօղ, բոլորն էլ միևնոյն տպագրութեան թղթեր, այսինքն յետին երեսին տպագրած գոյները միակերպ լինին: Այդ կալօղներից կը ժողովէք իւրաքանչիւր մաստի թղթերը առանձին և կը շինէք երեսուն երկու նոր տեսակ թղթեր, այսինքն մի կալօղ բոլորն էլ չերվի սուղ, մի կալօղ տրէֆի սուղ, մի կալօղ թագաւորներ, մի կալօղ զինուորներ, մի կալօղ տասնոցներ և այլն, և այլն:

Նախ քան Ֆոկուս սկսելը՝ դուք պէտք է հանդիսականներին ցոյց տաք իսկական խաղաթղթերը, որպէս զի կասկածը հեռացուի և յետոյ կը փոխէք: Այսպէս նախապատրաստուած կը մօտենաք հանդիսականին՝ խաղաթղթերը ձեռքին և կ'ասէք. «Հանեցէ՛ք կալօղի միջից մի թուղթ»: — Հանդիսականը՝ որ չը գիտէ թէ բոլորն էլ միատեսակ թղթեր են՝ կը հանէ մինը և կը տեսնէ որ, օրինակ, բուբնա աղջիկ է:

— Այժմ ձեր ձեռքով դրեցէ՛ք կալօղի որ և է ծալքում և լաւ մտքումը պահեցէք թէ այդ ի՞նչ թուղթ է:

Յետոյ դուք նորից կը վերցնէք կալօղը և արագ, ձարպիկութեամբ շատ կը խառնէք բազմութեան առաջ: Կ'առաջարկէք որ ձեր աչքերը կապեն թաշկինակով: Սորանից յետոյ ամբողջ կալօղը զգուշութեամբ կը դնէք յատակի կամ սեղանի վերայ ճիշդ երեսը դէպի ներքեւ, կը հանէք ձեր կախարդական սուրը և իբր

թէ որոնում էք դանելիք թուղթը՝ այս և այն կողմը կը քրքրէք. յետոյ յանկարծ սրի ծայրը ցցելով որ և է թղթում կ'ասէք. «Ա՛, անպիտան, տեսէք թէ ո՛րտեղ է թագ կացեր»: Ի հարկէ, որ բուբնի աղջիկը կը դուրս դայ, քանի որ ամբողջ կալօղը հէնց միատեսակ աղջիկներից է կազմուած: Այս՝ Ֆոկուսը շատ մեծ զգուշութիւն է պահանջում: Առաջին պայման. ձեր թղթերին ոչոք չը պիտի ձեռք տայ և ոչ էլ շատ մօտենայ:

ՆՈՐԱԶԵՒ ԴՕՄԻՆՕ

Խաղալու այս ձևը շատ հետաքրքիր է, որովհետեւ քարերի երեսը դէպի սեղանը դարձրած են խաղում:

Եթէ հանդիսականներից մէկը կասկած չայտնէ՝ թէ քարերը կեղծ են, կարող էք առաջարկել մի ուրիշ դօմինօ, իւր ցանկացածը և կը սկսէք խաղալ այս ձևով.

Նախ և առաջ խառնում էք քարերը, յետոյ վերցնում եօթը-եօթը կամ իննը-իննը, բաց երեսները դարձնում էք դէպի ձեզ և կեղծելու համար թէ դժուար խաղ է, սկսում էք երկար մտածել և վերջապէս դուրս դալ մի քար, դնելով երեսը դէպի սեղանը դարձրած:

Խաղը սկսվում է միմիայն մի կողմից, որովհետեւ երկու կողմից դժուար է յիշել, կարող էք շփոթուել: Երկու խաղացողներդ առաջուց պէտք է միմեանց լաւ հասկանաք, պայմանաւորուէք, մի քանի տեսակ

նշաններով վարժուէք և յետոյ ցոյց տաք ձեր վար-
պետութիւնը:

Առաջինը՝ ով որ սկսում է խաղը, պէտք է իւր
ընկերոջը յայտնէ թէ ի՞նչ քար է դուրս դալիս. այդ
պատճառաւ էլ պէտք է սեղանի տակ ոտքով թեթև
ա՛յնքան անգամ սեղմէ միւսի ոտքի ծայրը, որքան որ
քարի աչքերն են: Միւսը արդէն հասկանում է թէ
կցուող քարը ինչանոց պիտի լինի: Եթէ ընկերը չորս
անգամ սեղմեց՝ նշանակում է քարի ծայրին չորսանոց
է. միւսն էլ, օրինակի համար, սեղմեց երկու
անգամ, հասկանալի է որ վերջինը երկու է՝ կամ իս-
կապէս չորս և երկուանոց քար է:

Եթէ ծայրի քարը դատարկ է, այսինքն սպիտակ,
դուք ոչինչ չէք ասում, այլ ուղղակի դնում էք քարը,
կամ թէ հազում էք. այսպիսով խաղը վերջանում է:
Երբ երեսները դարձնում էք ստուգելու համար՝ հան-
դիսականը տեսնում է կանոնաւոր դասաւորութիւնը
և ակամայից զարմանում է:

Այս Ֆօկուսի զլխաւոր զաղտնիքը, ինչպէս տե-
սաք, հաղորդելու ձևն է, որը պէտք է շատ զգուշու-
թեամբ լինի: Կասկածը փարատելու համար պէտք է
նշանները փոփոխել. երբեմն թեթև շրթունքները
լիզելով հասկացնել, երբեմն զլուխը քորել, աչքերը
ծածկել, մատներով սեղանին զարկել, հազալ և այլն:



ԴԵՒԻ ՈՅԺ, ԿԱՄ ԲԱՐԸ ՍԵՂՄԵՆՈՎ, ՋՈՒԲ ՀԱՆԵՆ,

Այս Ֆօկուսը կատարելու համար պէտք է վա-
ղօք պատրաստի ունենալ փոքրիկ թրջած սպունդի
կամ բաճարակի կտոր ականջի յետին կողմը թաղցրած:
Վերցրէք որ և է պինդ մարմին՝ քար, դանակ կամ
ինչ որ ձեր գիմացի հետաքրքիր սպարոնը կ'առա-
ջարկէ: Յետ քաշեցէք թևքերդ և աւելի կախարդա-
կան ձև տալու համար՝ շփեցէք քարը ձեռքերնիդ
մէջ, յետոյ բռունցքը սեղմած բարձրացրէք մինչև
ձեր աջ քունքը: Խնդրեցէք դիմացինիդ, որին ցան-
կանում էք դուի չափ ոյժներդ հաստատել, որ ձեր
արմունկին երեք անգամ մատով խաչ քաշէ. այդ
յարմար միջոցին՝ զգուշութեամբ հանեցէք ականջի
յետևից թրջած սպունդը կամ բաճարակն և քարի
հետ միասին երկու ձեռքով պի՛նդ սեղմեցէք ու ջուրը
կը սկսէ կաթկաթել: Արպէս զի հակառակորդը զաղտ-
նիքը շուտ չը հասկանայ, սեղմելու միջոցին՝ ձախ
ձեռքով սպունդը հեռացրէք և ձգեցէք ձեր գրպանը.
Իսկ աջով ցոյց տուէ՛ք թաց քարը: Կատակի համար
ձախ գրպանից հանեցէք թաշկինակն և սրբեցէք ձեր
կեղծ քրտինքն ու թաց ձեռքերը:

Երկու անգամից աւելի չը կրկնէք այս Ֆօկուսը
մի և նոյն մարդու ներկայութեամբ:



ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

Այս հեշտ ֆոկուսը կատարվում է մի քանի մարդոց ներկայութեամբ հետևեալ ձևով.

Վերցնում են ամբողջ թուղթը և դասաւորում են սեղանի վերայ մի քանի հաւասար կարգերի: Գուշակողը հեռանում է միւս սենեակը կամ թէ երեսը ծածկում է, որպէս զի համոզէ է ամենքին, որ ոչինչ չէ տեսնում: Մնացողներից մէկը, բոլորի ներկայութեամբ, զուշակելու համար նշանակում է մի խաղաթուղթ, օրինակի համար՝ տրէֆի թաղաւորը: Երբ որ կանչում են կախարդին, վերջինը սկսում է երկար մտածել, մինչև որ օգնականը *) նորան մի նշանով կը հասկացնէ:

Ահաւասիկ հասկացնելու ձևը: Օգնականը նորան ասում է. «ի զուր շատ մի՛ մտածիր, ոչինչ չես կարող անել, մինչև անգամ եթէ ամբողջ օր ու կէս կամ տարի ու կէս մտածես»: Այս խօսքերից կախարդը հասկանում է թէ զուշակելիք թուղթը առաջին կարգումն է և վեցերորդ թուղթն է: Որպէս զի հանդիտականը այս խօսքերին նշանակութիւն չը տաց, վերցնում է բոլոր խաղաթուղթը, խառնում է և կեղծ շփոթուած սկսում է որոնել և վերջապէս բարկացած ձգում է սեղանի վերայ տրէֆի թաղաւորը:

Եթէ զուշակելիք թուղթը չորրորդ կարգից

*) Կախարդը պէտք է անպատճառ ունենայ իւր օգնականը նոյն իսկ հանդիտականների մէջ:

հինգերորդն է, օգնականն ասում է. «եթէ չորս օր հինգ հինգ ժամ մտածես, չես կարող այս անգամը զուշակել»: Արդէն կախարդը հասկացաւ, որ նշանակած թուղթը չորրորդ կարգից հինգերորդն է:

Պայմանաւոր խօսքերը պէտք է միշտ փոփոխել և ֆոկուսն էլ երկու կամ երեք անգամից աւելի չը կրկնել:

ԳՏՆԵԼ ԿԱՐԳՈՎ 32 ԹՈՒՂԹՆ ԷԼ

Աշխատեցէք հետևեալ կարգը յիշել՝ ու՛ր Լուսնո՛ր, զէ՛նո՛ր է՛նը, ու՛ջէ՛ն Գո՛ր, Եօ՛ւր Գո՛ւ: Անգիր սովորեցէք տողած բառերը. իսկ ինչ վերաբերում է նշաններին (մաստերին), պահպանեցէ՛ք հետևալ կարգը՝ շէ՛րմ, պէ՛ն, Բո՛ւր, Գրէ՛Ք, որ միևնոյն է թէ սիրտ, ազուաւ, աղիւս, խաչ:

Այս երկու կանոն էլ ճշտութեամբ պահպանելուց չետոյ՝ դասաւորեցէ՛ք թղթերը հետևեալ դասակարգերի.

I

- 1) Ութանոց չերվա նշանով:
- 2) Թաղաւոր պիկ »
- 3) Զինուոր բուբնա »
- 4) Խննանոց տրէֆ »
- 5) Աղջիկ չերվա »
- 6) Տասանոց պիկ »
- 7) Եօթանոց բուբնա »
- 8) Տուզ տրէֆ »

II

- 9) Ութանոց պիկ »
- 10) Թագաւոր բուբնա »
- 11) Զինուոր տրէֆ »
- 12) Իննանոց չերվա »
- 13) Աղջիկ պիկ »
- 14) Տասանոց բուբնա »
- 15) Եօթանոց տրէֆ »
- 16) Տուգ չերվա »

III

- 17) Ութանոց բուբնա »
- 18) Թագաւոր տրէֆ »
- 19) Զինուոր չերվա »
- 20) Իննանոց պիկ »
- 21) Աղջիկ բուբնա »
- 22) Տասանոց տրէֆ »
- 23) Եօթանոց չերվա »
- 24) Տուգ պիկ: »

IV

- 25) Ութանոց տրէֆ »
- 26) Թագաւոր չերվա »
- 27) Զինուոր պիկ »
- 28) Իննանոց բուբնա »
- 29) Աղջիկ տրէֆ »
- 30) Տասանոց չերվա »
- 31) Եօթանոց պիկ »
- 32) Տուգ բուբնա »

Այս դասաւորութիւնից պարզ երևում է որ կարգը չէ խանդարվում, այլ մնում է միևնոյնը, միմիայն առաջին անգամ սկսվում է չերվայով, երկրորդը պիկով, երրորդը բուբնայով և վերջապէս չորրորդը տրէֆով: Նշանակում է եթէ վերևի կարգը լաւ չիշէք, այն ժամանակ կարող էք ամբողջ խաղաթղթերը կարգով անուանել թէ որն ի՞նչ թուղթ է և ինչ մասսից:

ԹՂԹԷ ԹԱԻԱՅՈՒՄ ԶՈՒՐ ԵՓ ՏԱԼ ԱՌԱՆՅ ԹՈՒՂԹՆ ԱՅՐԵԼՈՒ

Վերցրէք խաղալու թուղթ, ծալեցէք եղերքները այնպէս՝ որ նմանուի թաւային: Լցրէք այդ նորաձև թաւան ջրով և բռնեցէք հորիզոնական զիրքով վառած մոմի վերայ: Աշխատեցէք թաւան այնպէս չարմարեցնել, որ ոչ մի տեղից ջուրը չը կաթի և ոչ էլ բերնէ-բերան լինի լցրած: Այս բոլորը ճշտութեամբ կատարելուց յետոյ կը ականէք, որ երեք ռոպէից ջուրը եռաց առանց թուղթն այրուելու: Քանի որ մէջը ջուր կայ, չայսնի բան է չի այրուիլ. այդ ֆիզիքական օրէնք է:



ԳՈՒԽ Է.

ԱՐԱԳԱԽՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՄ ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1. Կամայ կամ ակամայ:
2. Օղբ թնդաց թնդանօթի թնդիւնից:
3. Մահակ, Հացկակ, հակակ, պահակ, Սահակ:
4. Էս էշին շուտ չուշ ասան, դուն էլ էս էշին շուտ չուշ ասան:
5. Լծակ, պիծակ, ծծակ, ծիծակ:
6. Ձխտերդ սաղցրիր ու տարար էլ:
7. Շատ խիտ, շատ ցուրտ տարեմուտ:
8. Համ դամ ու համ լամ կամ համ լամ ու համ դամ ու համ տամ:
9. Այնտեղ կայ երկու ահարկու կկու, այնտեղ կայ միակ մի հակ, թիակ ու դիակ:
10. Աքլորն ընկաւ խոր ձորը, խնձորն ընկաւ հօր փորը:
11. Շուշան, ասան շուտ շուտ շուտ շուտսեղուկ:
12. Խորէնը խոհեմ ու ողջախոհ է, Խոսքընը փակող ու փակող:



« Ազգային գրադարան



NL0135243

